

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ԶԵԿՈՒՅՑ, 2021թ.

ՊԱՇՏՊԱՆԵԼՈՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ԳՐԱՏԱՄՈՒԻՐԵՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ԶԵԿՈՒՅՑ, 2021թ.

ՊԱՇՏՊԱՆՆԵԼՈՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ



ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում պղնձի և մոլիբդենի առաջատար արտադրող լինելով՝ մենք արժեքներ և զարգացում ենք ապահովում ընկերության շահառուների, աշխատակիցների և համայնքների համար: Մենք կառուցում և շահագործում ենք հանքարդյունաբերական ձեռնարկություն, որը սկզբունքահեն պատասխանատվությամբ համաշխարհային հանրության համար արտադրում է պղնձի և մոլիբդենի խտանյութ՝ պահպանելով և բարելավելով մեր կենսակերպը, պաշտպանելով շրջակա միջավայրը և արժանին հատուցելով շահագրգիռ կողմերին: Շարունակելով նորարարություններ ներդնելու քաղաքականությունը, թվայնացումն ու փոփոխությունները մեր ողջ գործունեության մեջ՝ ցանկանում ենք դառնալ աշխարհում պղնձի և մոլիբդենի առաջատար արտադրողներից մեկը, որն իրական ժամանակում օպտիմալացնում է ժամանակակից հանքարդյունաբերության արժեքային շղթան:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կայուն զարգացման առաջին հաշվետվության նպատակը շահագրգիռ կողմերին ընկերության տեսլականը և կայունության նպատակները հաղորդելն է: Հրապարակելով ծրագրերը՝ մենք ապահովում ենք մեր հաշվետվողականությունը. սույն հաշվետվությունն ընդգրկում է «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» (այսուհետ՝ ԶՊՄԿ) փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսական տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը) գործունեությունը: Հաշվետվությունն անդրադառնում է բոլոր էական ազդեցություններին, որոնք մեր գործունեության հետևանքն են: Հաշվետվությունը կազմվել է՝ հաշվի առնելով Համաշխարհային հաշվետվության նախաձեռնության թափանցիկության չափանիշը (GRI Standards 2021):

2021 թվականի ընթացքում ընկերությունը նոր բաժնետիրոջն է վաճառել իր գանձապետական բաժնետոմսերի մի մասը՝ 60%-ը: Նոր բաժնետերը դրանց 25%-ը փոխանցել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Հաշվետվության մեջ 2021 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև 2022 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածին վերաբերող տեղեկատվությունը ներառված չէ:

Փաստաթուղթը ներկայացնում է նաև հեռանկարային հայտարարություններ՝ հիմնված ընթացիկ կանխատեսումների և ակնկալիքների վրա: Հետևաբար, տարբեր գործոններ կարող են պատճառ հանդիսանալ, որ արդյունքները որոշակիորեն տարբերվեն ներկայացված գնահատականներից: Հաշվետվությունը չի ենթարկվել աուդիտի:

ԶՊՄԿ Գործադիր խորհուրդը (տես էջ 59) ստեղծել է կայունության զարգացման տնօրենություն՝ աջակցելու կայունության ռազմավարության վերլուծությանը և հաստատմանը: Այնուամենայնիվ, կայունության հաշվետվության հաստատման գործընթացը դրանում ներառված չէ և նախատեսվում է ձևակերպել 2022 թվականի ընթացքում: Քանի որ սա առաջին հաշվետվությունն է, ԶՊՄԿ առանձին ստորաբաժանումներից պահանջվել է այս հաշվետվության համար կազմել տվյալների իրենց վերլուծությունները:

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ



ՌՈՄԱՆ ԽՈՒԻՈԼԻ
«ԶՊՄԿ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Ես ուրախ եմ, որ ԶՊՄԿ առաջին կայուն զարգացման հաշվետվությունը հրապարակվել է թիմի բոլոր անդամների նվիրված աշխատանքի շնորհիվ, ովքեր իրենց կարևոր ներդրումն են ունեցել այս գործում: Կայուն զարգացման հաշվետվությունը ընկերության հեղինակության, լավ կորպորատիվ քաղաքացի լինելու պարտավորության, ընկերության դեմքի անբաժանելի մասն է: Սույն հաշվետվությունը պատրաստվել է ընկերության նախկին ղեկավարության կողմից, նախկին սեփականատերերի օրոք: Եվ ես երախտապարտ եմ նախորդ ղեկավարությանը այս ջանքերի համար: Այսօր դա մեր ընկերության դեմքն է, և մենք կրում ենք դրա ողջ պատասխանատվությունը: Բացահայտված խնդիրներ կան, և ես հասկանում եմ, որ մենք ընկերության նոր սեփականատերերն ենք և ղեկավարներս, մեծ աշխատանք ունենք անելու, որպեսզի ընկերության ցուցանիշները տարեցտարի բարելավվեն:

Մեծ աշխատանք է կատարվել նաև կայուն զարգացման ուղղությամբ, և այս զեկույցում կան ձեռքբերումներ, որոնցով կարծում եմ, պետք է հպարտանան ԶՊՄԿ-ում բոլոր աշխատողները:

Բնապահպանական և սոցիալական կառավարումը, առողջությունն ու անվտանգությունը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը պարզապես նորաձև միտում չեն հանքարդյունաբերության ոլորտում: Սա աշխատանքի ձևն է բոլոր այն ընկերությունների համար, որոնք ցանկանում են ապագա ունենալ այսօրվա արդյունաբերության մեջ, ցանկանում են շահել իրենց համայնքների վստահությունն ու աջակցությունը և ձգտում են կայուն հաջողության: Ցանկանում եմ, որ սա դառնա ԶՊՄԿ-ի աշխատանքի մեթոդը գալիք տարիների ընթացքում:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ԶՊՄԿ թիմին, մեր բոլոր աշխատակիցներին, ովքեր ամեն օր նպաստում են անվտանգ և կայուն աշխատանքի ապահովմանը: Միշտ բարելավվելու տեղ կա, և ես ուզում եմ, որ մենք բոլորս կարողանանք հպարտանալ այն փաստով, որ ամեն տարի՝ նախորդի համեմատ, մենք հասնում ենք բարելավումների:

Ցանկանում եմ ուղերձ հղել մեր ողջ թիմին, մեր բոլոր շահագրգիռ կողմերին և բաժնետերերին, մեր համայնքներին և Հայաստանի ժողովրդին: ԶՊՄԿ-ն Հայաստանի տնտեսության սիրտն է: Մեզանից յուրաքանչյուրի պարտքն է ապահովել այս ձեռնարկության առողջությունը բոլոր ոլորտներում, բայց հատկապես՝ կայուն զարգացման ոլորտում: Ժամանակակից հանքարդյունաբերության ոլորտը արդյունաբերություն է, որտեղ չկա զիջումների տեղ շրջակա միջավայրի կառավարման, սոցիալական արդարության, բոլորի համար արժանապատիվ աշխատատեղերի, թափանցիկության և հաշվետվողականության հարցերում:

Այս գիտակցությամբ է, որ մենք հրապարակել ենք այս զեկույցը, որը նաև նոր ելակետ է բոլորիս համար:

Այսպիսի զեկույց հրապարակվելու է յուրաքանչյուր տարի, և ամեն տարի մենք կձգտենք բարելավել և հասնել ավելի լավ արդյունքների՝ կայուն զարգացման բոլոր ուղղություններով:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ



ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ԶՊՄԿ» ՓԲԸ

Կայուն զարգացման տնօրեն

ԶՊՄԿ կայուն զարգացման տնօրինությունը ուրախ է ներկայացնել ընկերության կայուն զարգացման առաջին հաշվետվությունը: Մենք սա համարում ենք պատմական իրադարձություն, քանի որ առաջին անգամ է, որ Չայաստանի խոշորագույն ձեռնարկությունը և աշխարհի առաջատար մոլիբդենի արտադրողներից մեկը ներկայացնում է կայուն զարգացման մասին հաշվետվություն:

Ես միացա ԶՊՄԿ թիմին, երբ այս հաշվետվությունը հիմնականում ավարտված էր, և առաջին հերթին ուզում եմ շնորհակալություն հայտնել կայուն զարգացման թիմի նախորդ ղեկավարությանը և հենց թիմին իրենց քաջության, ջանքերի և նախաձեռնության համար: Հսկայական աշխատանք է կատարվել, և մենք կիսվում ենք դրանով մեր բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ թիմի հետևողականության և քրտնաջան աշխատանքի շնորհիվ:


Կայուն զարգացումը պարզապես գործունեության մի մասը չէ: Նպատակն է այն դարձնել գործունեության հիմք բոլոր ոլորտներում: Մենք դեռ դրան չենք հասել: Արդյունաբերությունը դժվարություններ է ապրում ամբողջ աշխարհում, հատկապես զարգացող երկրներում, այդ թվում՝ Չայաստանում: Ծատ անելիքներ կան, որպեսզի հանքարդյունաբերական ընկերությունները ընդունեն և իրականացնեն կայուն զարգացման բոլոր ժամանակակից չափանիշները և դրանով իսկ փոխեն ոլորտի ընկալումը: Եվ ես ուրախ եմ, որ թիմը գիտակցում է դա և պատրաստ է փոփոխությունների:

Այս հաշվետվությունը ցույց է տալիս, որ ԶՊՄԿ-ն մեծ ջանքեր է գործադրել ԲՄԿ-ի (շրջակա միջավայր, սոցիալական և կառավարչական հարցեր) լավագույն փորձը կիրառելու համար այն ոլորտներում, որտեղ այն կամ բացակայում էր, կամ թույլ էր: Բայց դա բացահայտում է նաև բացթողումներն ու թերությունները: Մենք ուրախ ենք, որ այդպես է: Որովհետև այն մեզ հստակ ուղեցույց է տալիս, թե ինչը պետք է շտկենք և ինչն ենք ցանկանում բարելավված տեսնել հաջորդ տարվա հաշվետվությունում և դրանից հետո:

Հանքարդյունաբերությունը ընդամենը անհրաժեշտ արդյունաբերություն չէ: Այն չափազանց կարևոր է հատկապես այսօր, երբ կանաչ էներգետիկայի անցումը բոլոր երկրների օրակարգում է: Հանքարդյունաբերությունը պետք է լինի կայունության մասին բանավեճի շարժիչ ուժը, և դա անելու համար արդյունաբերությունը պետք է փոխակերպվի: Թերևս նույնիսկ ավելի արագ, քան ցանկացած այլ արդյունաբերություն:

«Գրինվոշինքը» տարբերակ չէ: Դա չի հեշտացնի հանքարդյունաբերական ընկերությունների գործունեության սոցիալական վստահություն ստանալը: Դրա համար անհրաժեշտ է բաց, ազնիվ և խորը երկխոսություն: Մենք հուսով ենք բացել այն այս հաշվետվությամբ և միասին բարելավել:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ԶՊՄԿ ղեկավարությանը փոփոխությունների հանդեպ իրենց հանձնառության համար և հրավիրել թիմի բոլոր անդամներին՝ դառնալու այս փոփոխության մի մասը:





ՅՈՐԱՆՆԵՍ ԲՅԱՏ
«ՁՊՄԿ» ՓԲԸ նախկին գլխավոր
գործադիր տնօրեն

ՀԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ,

Այս հաշվետվությամբ մենք ներկայացնում ենք «ՁՊՄԿ» ՓԲ ընկերության կայուն զարգացման ուղղությամբ 2021 թվականի գործունեությունը :

Մենք հասկանում ենք, որ բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ESG/ FՍԿ) գործոններն ավելի ու ավելի առաջնահերթ են դառնում ներդրողների, բաժնետերերի և շահագրգիռ կողմերի լայն խմբի համար: Դետալաբար, որպես հանքարդյունաբերական ընկերություն՝ ցանկանում ենք ավելի ակնառու ինտեգրել բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ԲՍԿ) թեմաները կորպորատիվ ռազմավարությունների, որոշումների կայացման և շահագրգիռ կողմերին ներկայացվող հաշվետվություններում:

ԲՍԿ-ն շարունակում է մնալ ՁՊՄԿ-ի ուշադրության կենտրոնում և տարեցտարի ընդլայնում է իր տեսակարար կշիռը մեր ռազմավարության մեջ: Ես հպարտ եմ այն ահռելի առաջընթացով, որին հասել ենք չափազանց դժվարին և փորձություններով հարուստ տարվա ընթացքում: Նույնիսկ, երբ COVID-19 համաճարակը շարունակում էր մարտահրավերներ ստեղծել, ՁՊՄԿ-ն կարողացել է կենսագործել կորպորատիվ քաղաքացիության իր առաքելությունը՝ կիրառելով նորարարություններ և դրսևորելով ճկնություն:

Ընկերության հաջողության իրական ցուցանիշը մեր հարաբերություններն են տեղական համայնքների հետ, որտեղ մենք ապրում և աշխատում ենք: Այս համայնքների զարգացումն ապահովելու և առաջ մղելու համար մենք շարունակում ենք ներդրումներ կատարել սոցիալական ոլորտում: Դրանք հիմնված են բազմազանության և ներառականության վրա, որպեսզի համահունչ լինեն մեր կորպորատիվ արժեքներին:

2021 թվականին մեր ուշադրության կենտրոնում են եղել հետևյալ հիմնախնդիրները.

1. Կենսագործունեության անվտանգություն.
 - ▷ 2021 թվականին PPE (անձնական պաշտպանիչ միջոցներ) նոր քաղաքականության իրականացում,
 - ▷ կենտրոնացում կենսագործունեության անվտանգության գծով վերապատրաստման վրա,
 - ▷ կենսագործունեության անվտանգության բոլոր համապատասխան Նշաձողերի (KPI)-ների բարելավում՝ որպես հիմնանպատակ:

2. COVID-19.

Պաշտպանելով մեր բոլոր աշխատակիցներին COVID-19-ով պայմանավորված ռիսկերից և վտանգներից՝ ապահովել էնք, որ մեր գործունեությունն անգամ համաճարակային պայմաններում շարունակվի: Ես երախտապարտ եմ թիմային անհավատալի աշխատանքի, ճկունության և հոգատարության համար:

3. Շրջակա միջավայր.

2021 թվականին մեկնարկել են տարբեր առանցքային նախագծեր՝ թափոնների հավաքման ու վերամշակման գործընթացները բարելավելու, ջրօգտագործման արդյունավետությունը բարձրացնելու համար:

4. EHS (շրջակա միջավայր, կենսագործունեության անվտանգություն) տվյալների շտեմարանի և բնապահպանական տվյալների աղբյուրների հետագա թվայնացում.

Մենք կշարունակենք մշակել և իրականացնել ԲՍԿ ռազմավարությունը կորպորատիվ ռազմավարության ցիկլերի միջոցով:

Ես իրատեսորեն դրական ակնկալիքներ ունեմ այն առաջընթացի վերաբերյալ, որը, համոզված եմ, մենք ձեռք կբերենք՝ սերտորեն համագործակցելով մեր համայնքների, հաճախորդների և բաժնետերերի հետ: Մենք ունենք հստակ գործողությունների ծրագիր 2022 թվականի համար: Ավելին իմանալու համար առաջարկում եմ ծանոթանալ հաշվետվությանը:

Յոհաննես Բհատ
«ԶՊՄԿ» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն
(2021-2022 թ. ապրիլ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷՋ 09

ԶՊՄԿ ՄԱՍԻՆ

ԷՋ 14

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷՋ 26

ՀԱՄԱՅՆՔ

ԷՋ 35

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

ԷՋ 45


ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

ԷՋ 58

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԷՋ 66

ՀԱՎԵԼՎԱԾ



ԶՊՄԿ-Ն՝ ԹՎԵՐՈՎ


Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը հայկական ՓԲԸ է: Այն ստեղծվել է որպես պետական ձեռնարկություն 1951 թ, հետագայում մասնավորեցվել է 2005 թ.

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԾԽՈՄ

● Արդյունաբերական ընկերություն*

● Հայաստանի ազգային շահերի հիմնադրամ


● Հայաստանի Հանրապետություն



* «Գեոպրոմայնինգ Արմենիա» ընկերությանը 100%-ով պատկանող դուստր ընկերություն Ընթացիկ գործադրներով կայանավորված Քաժնետիրական վերջնական կառուցվածքը կնեղկայացվի հաջորդ «Կայուն զարգացման հաշվետվություն»-ում

ՀԱՆՔԱՔԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, 2021Թ.

18.3 MTPA*



* Տարեկան մետրիկ տոննա

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ, 2021Թ.

4,374



ՁՈՏ ՎԱՃԱՌՔՆԵՐ, 2021Թ.

AMD* 342.06 մլրդ կամ

USD 679.00 մլն

* ՀՀ դրամ

ԶՊՄԿ-ի հիմնական գործունեությունը մոլիբդենի և պղնձի հանքարդյունահանում, ու մոլիբդենի և պղնձի խտանյութերի արտադրություն:

2041

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի հանքարդյունաբերությունը հարուստ ընդերքի շնորհիվ 250 տարի շարունակ ոչ միայն ամրապնդում է մեր երկրի տնտեսության հիմքերը, այլև հարստացնում աշխարհը: 1770-ական թվականներին, պղնձի արդյունահանմանը զուգընթաց, Հայաստանում հայտնաբերվել և մշակվել են ոսկու, մոլիբդենի, կապարի և ցինկի զգալի հանքավայրեր: Այդ ամբողջ ընթացքում հանքարդյունաբերությունը գրանցել է կայուն աճ և մեր օրերում կազմում է Հայաստանի Հանրապետության տնտեսության մոտ մեկ երրորդը: Այս իրողությունը հանքարդյունաբերական ընկերություններին դարձնում է շինարարական նախագծերի և տեխնոլոգիական զարգացումների անբաժանելի մասն ամբողջ աշխարհում: ԳԳ-ում նման ընկերություններից առաջատարը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է:

ԶՊՄԿ-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՐՔՈՒՄ

1951 թվականին՝ որպես պետական ձեռնարկություն հիմնադրվելուց ի վեր ԶՊՄԿ-ն դարձել է հանքարդյունաբերության առաջատարը Հայաստանում, և տարածաշրջանում: 2005 թվականին կոմբինատը մասնավորեցվեց՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն, իսկ 2021 թվականին դարձավ Հանրապետության չորրորդ խոշորագույն գործատուն:



▲ Հայաստան, Զանգեզուրի լեռներ. հանքավայրի և կոմբինատի տեղադրությունը

Շուրջ 70 տարի ԶՊՄԿ-ն ԳԳ խոշորագույն հարկատուներից է: Մարզի մյուս հանքարդյունաբերական ընկերություններից առանձնանում է բարձրորակ պաշարներով, կորպորատիվ պատասխանատվության լայնածավալ ծրագրերով, արդյունահանվող հանքաքարի հսկայական ծավալներով և գործառնական տպավորիչ արդյունավետությամբ:

ԶՊՄԿ-ի գլխամասային գրասենյակը գտնվում է Քաջարանում՝ Սյունիքում՝ Հայաստանի՝ մեծությամբ երկրորդ մարզում, մայրաքաղաք Երևանից մի քանի հարյուր կիլոմետր հարավ: Շրջապատված է Քաջարանի բազմազան և հյուսվածքային ռելիեֆի բնական ռեսուրսներով:

Օղակված է գրեթե 4000 մետր բարձրությամբ լեռներով: Բացահանքը գտնվում է 1830-2360 մ բարձրության վրա:

Ընկերությունը շահագործում է Հայաստանի՝ երկարաժամկետ, հաստատված պաշարներով խոշոր հանքավայրերը՝ հիմնականում արդյունահանելով և վերամշակելով մոլիբդենի ու պղնձի հանքաքարեր: Այս երկու օգտակար հանածոները օգտագործվում են ամբողջ աշխարհում հազարավոր անուն արտադրանքներ ստեղծելիս: Դրանք անփոխարինելի են ժամանակակից հասարակության, իսկ դրանց խտանյութերը՝ պողպատի արդյունաբերության և առհասարակ արդյունաբերական արտադրության համար:

Այդուհանդերձ, ռեսուրսները կորցնում են իրենց արժեքը, եթե բացակայում է դրանք արդյունահանող-մշակող-ապրանքի վերածողը. ԶՊՄԿ-ն օգնել է Հայաստանին միանալ համաշխարհային տնտեսությանը, քանի որ սպասարկում է պողպատի և հանքարդյունաբերական արդյունաբերությունները Չինաստանում և Եվրոպայի մեծ մասում:

ԶՊՄԿ-ն բաղկացած է հետևյալ երեք ստորաբաժանումներից.

- ▷ բացահանք,
- ▷ վերամշակման գործարան,
- ▷ Արծվանիկի պոչամբար:

Ներկայացվող հաշվետվությունում մանրամասնորեն կանդորադառնանք յուրաքանչյուր ստորաբաժանմանը, որպեսզի ներկայացնենք ընկերության պատմությունն ու գործունեության շրջանակները:

ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ՝ ԲԱՑ ԵՂԱՆԱԿՈՎ

ԶՊՄԿ-ն, որպես ստորգետնյա հանք, շահագործման է հանձնվել 1951 թվականին: 1954 թ-ից հանքավայրում համատեղ իրականացվել են և՛ ստորգետնյա, և՛ վերգետնյա արդյունահանման աշխատանքներ: Այնուհետև՝ 1962 թվականից առ այսօր, բացառապես կիրառվում է արդյունահանման բաց եղանակը:

Գործող բացահանքը գտնվում է Ողջի գետի աջ ափին՝ ծովի մակարդակից մոտավորապես 2200 մետր բարձրության վրա, ինչը հնարավորություն է տալիս բարելավել արդյունավետությունը՝ կտրուկ նվազեցնելով

ստորերկրյա ջրերին միջամտությունը: Ստորգետնյա ջրերի ցածր ներհոսքի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում բացահանքից հեռացնել միայն անձրևների և շրջակա առուների, գետերի ջրերը: Սանվազագույնի է հասցնում ջրահեռացման սարքավորումների կարիքը, ինչը թույլ է տալիս առավել վստահ մուտք գործել հանքային ավազան:

Երկրաբանական վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Քաջարանի հանքավազանն ունի 2,21 միլիարդ տոննա ապացուցված պաշարներ: Այս պաշարներից պղնձի պարունակությունը կազմում է 5,22 մլն

մետրիկ տոննա, իսկ մոլիբդենի պարունակությունը՝ 0,72 մլն տոննա: ԶՊՄԿ-ն Քաջարանի հանքավայրը շահագործում է որպես բացահանք, որը ներկայում տարեկան տալիս է տասնյակ միլիոնավոր տոննա հանքաքար, ինչով կարող է ապահովել տասնամյակներ շարունակ՝ հաշվի առնելով պաշարների ծավալները:

Հանքարդյունահանման գործընթացը կազմակերպվում է հետևյալ հաջորդական փուլերով. սկզբում բացահանքում պայթեցման եղանակով արդյունահանվում է հանքաքարը: Դրանից հետո, այն շուրջօրյա ռեժիմով կորզվում է էքսկավատորի շերտփով և բարձվում

▽ Լոգիստիկ գործողություններ ԶՊՄԿ-ի բացահանքում



բեռնատարի մեջ, այնուհետև, բացահանքից ուղարկվում առաջնային ջարդիչ կայան՝ կամ անմիջապես բեռնատարով, կամ ստորգետնյա տրանսպորտային հանքուղով: Հանքաքարը ջարդվում, մանրացվում և հարստացվում է տարբեր հոսքագծերով և վերամշակվում է մոլիբդենի և պղնձի առանձին խտանյութերի:

ՀԱՐՍՏԱՑՈՒՑԻՉ ՖԱԲՐԻԿԱՅԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՁՊՄԿ-ի հանքահումքային արտադրանքը լայնորեն օգտագործվում է արդյունաբերության մեջ, մասնավորապես՝ մեքենաշինությունում, ավտոմոբիլաշինությունում, էլեկտրոնիկայում և էլեկտրատեխնիկայում, նավթաքիմիական և վերամշակման արդյունաբերությունում, էներգետիկայում, շինարարությունում, սպառողական ապրանքներում, առողջապահությունում, սննդի և քիմիական արդյունաբերությունում: Իսկ ինչպե՞ս է հանքաքարը նախնական վիճակից դառնում վաճառվող ապրանք.

Հարստացուցիչ ֆաբրիկայում ավանդական ջարդման, մանրացման և ֆլոտացիոն գործընթացները արդյունահանված հանքաքարը վերածում են պղնձի և մոլիբդենի առանձին խտանյութերի, որից հետո դրանք ջրազրկվում են երկու առանձին արտադրական սարքավորումներում: Որակի հսկողությունը իրականացվում է գերժամանակակից լաբորատորիաներում: Այստեղ էլ մշակվում են հանքաքարի նմուշները, կատարվում են ֆլոտացիոն անալիզներ և հետազոտական այլ փորձարկումներ:

2005-2009 թվականներին ՁՊՄԿ-ն ընդլայնել է հարստացուցիչ ֆաբրիկայի ֆլոտացիոն հզորությունը՝ տեղադրելով նոր՝ ավելի մեծ ծավալի օդի ներմղման խցիկներ. դրանք աշխատում են ցածր ճնշման օդով և մակարդակի ավտոմատ կառավարմամբ՝ այդպիսով բարձրացնելով արդյունավետությունը, արդիականացնելով ֆաբրիկայի աշխատանքը:

Ընդհանուր առմամբ, ՁՊՄԿ հարստացուցիչ ֆաբրիկան կայացած, ժամանակակից ձեռնարկություն է, որը կարող է հանքաքար մշակել 22 MTPA (տարեկան մետրիկ տոննա) տպավորիչ ծավալով: Այդուհանդերձ, արտադրողականությունն էլ ավելի կբարձրանա, եթե ներդրվեն լրացուցիչ տեխնոլոգիաներ, ինչպիսիք են նոր մանրացման ֆլոտացիոն հոսքագիծը և գնդիկավոր աղացը:



▲ Հարստացուցիչ ֆաբրիկա. ֆլոտացիոն խցիկ

Ինչպես են կոմբինատի հանքանյութերը ապահովում աշխարհի առաջընթացը

Մեր ժամանակներում պղինձը աշխարհում ամենապահանջված և բազմակողմանի կիրառմամբ մետաղներից է՝ արդյունաբերական պողպատի արտադրության հիմքը: Այն անփոխարինելի է դարձել էներգիայի վերականգնվող աղբյուրների զարգացման համար. էլեկտրական մետաղալարերի արդյունաբերությունը սպառում է աշխարհի մաքուր պղնձի մինչև 60%-ը՝ տարբեր մալուխների և լարերի արտադրության համար:

Ի լրումն նավթի արդյունաբերության մեջ որպես կատալիզատորի լայն կիրառման՝ առևտրային մոլիբդենի մեծ մասն օգտագործվում է այնպիսի համաձուլվածքների արտադրության մեջ, ինչպիսին պողպատն է: Պողպատի արդյունաբերությունը նաև հենվում է մոլիբդենի օքսիդի և ֆերոմոլիբդենի՝ մոլիբդենի ածանցյալների վրա, քանի որ դրանք ոչ միայն պահպանում, այլև բարձրացնում են պողպատի որակական հատկանիշները (օրինակ՝ ամրությունը, ջերմաստիճանի նկատմամբ դիմադրությունը) և պաշտպանում են կոռոզիայից:



ՊՈՉԱՄԲԱՐ


Մշակումից հետո հաջորդ կարևոր փուլը տեղի է ունենում Արծվանիկի պոչամբարում:

Պոչամբարը ինժեներական կառույց է, որը բաղկացած է երկու մասից՝ հանքարդյունաբերության ու մետաղական հանքաքարի վերամշակման մնացորդների պահեստավորման տարածքից և դրա հետ կապված ջրի կառավարման համար պաշտպանիչ ամբարտակից: Հանքանյութերը, որոնք ջրի մակերես չեն բարձրանում փրփուրային ֆլոտացիայի ժամանակ, անցնում են ջրատար մի շարք խողովակների և ջրանցքների միջով, որոնք միացնում են հարստացուցիչ ֆաբրիկան և պոչամբարը: Այս երթուղին անցնում է Ողջի գետի ձախ ափով և կուտակում հանքանյութերը՝ Կապանի վարչական տարածքում գտնվող պոչամբարում:

Արծվանիկի պոչամբարը տեղակայված է Արծվանիկի կիրճում՝ հարստացուցիչ ֆաբրիկայից 34,5 կմ հեռավորության վրա: Ծովի մակարդակից 900 մ բարձրության վրա գտնվող ամբարտակն այժմ գործում է 398 մլն խ/մ ծավալով:

Արտադրության ընդլայնումը և արտադրական օբյեկտների նորացումը թույլ են տվել ՁՊՄԿ-ին վերջին տարիներին դառնալ համաշխարհային դերակատար: 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության զուտ վաճառքը կազմել է 341,3 մլրդ դրամ (691,3 մլն ԱՄՆ դոլար): Ընդհանուր կապիտալիզացիան 2021 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 267 մլրդ դրամ (551,6 մլն ԱՄՆ դոլար): Դրանցից 111 մլրդ դրամը (230 մլն ԱՄՆ դոլար) կազմում է սեփական կապիտալը, իսկ 156 մլրդ դրամը (321 մլն ԱՄՆ դոլար)՝ պարտքը:

Համայնքային ծրագրերում ներդրումների, կայունության վրա կենտրոնացման և բոլոր շահագրգիռ կողմերի օգտին աշխատելու հստակ հանձնառության միջոցով՝ ՁՊՄԿ-ն ճանապարհ է հարթում ապագա հաջողության համար:




▲ Արծվանիկի պոչամբարի քարտեզ. պոչամբարը գտնվում է բացահանքից և վերամշակող գործարանից 34,5 կմ հեռավորության վրա

▲ Արծվանիկի պոչամբար

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



ԶՊՄԿ-ի կայուն զարգացման արժեքի առաքելությունը. մենք կենսագործում ենք ավանդույթն ու փորձը: ԶՊՄԿ-ն իր շուրջ 70 տարվա փորձով վաստակել է համայնքի վրա մեծ ուշադրություն կենտրոնացնող գործատուի և վստահելի բիզնես գործընկերոջ բարի համբավը: Այն ամենը, ինչ մենք անում ենք, հիմնված է մեր կորպորատիվ ինքնությունը կազմող արժեքների պահպանման վրա:

<p>ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԹՎԵՐ. ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ</p>	<p>ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ</p> <ol style="list-style-type: none"> 1 Տեղական համայնքների զարգացում 2 Տեղական կրթություն և կարողությունների զարգացում 3 Աշխատակիցների առողջություն 4 Արդիականացում 5 Ռեսուրսների պահպանում 6 Ուղղահայաց ինտեգրում 7 Թվայնացում 	<p>ԿԱՅՈՒՆ ԶԵՌԱՆԿԱՐ. ԱՐՏԱՐԺՈՋԹՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ (MOODY'S) ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ «ԶԱՐԳԱՑՈՒԹՅ» ՄԻՆԶԵՎ «ԿԱՅՈՒՆ»</p> 
<p>ՉՊՄԿ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ</p> <p>Մենք զբաղվում ենք աշխարհում պահանջված օգտակար հանածոներից երկուսի՝ պղնձի և մոլիբդենի կայուն հետախուզմամբ, արդյունահանմամբ և վերամշակմամբ:</p>	<p>ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՑՈՒՄ, 2021Թ.</p> <p>Մեր ԲՍԿ մոտեցումը համահունչ է՝</p> 	

ԶՊՄԿ-Ի ԱՐԺԵՔՆԵՐԸ

Կայունության զարգացումը հիմնական արժեքն է, որն առաջնորդում է ինչպես մեր այսօրվա գործունեությունը, այնպես էլ վաղվա մեր ծրագրերը: Հանքարդյունաբերության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա արդեն հայտնի է: Բայց այս գործառույթները նաև կենսական նշանակություն ունեն այն հումքի հասանելիությունն ապահովելու համար, որից կախված է արդյունաբերությունը՝ աշխարհի բոլոր մարդկանց կյանքն ավելի լավը դարձնելու և տեխնոլոգիաների զարգացմանը նպաստելու համար: Այդ նպատակով ԶՊՄԿ-ն անուղղակիորեն զգալի ներդրում է կատարում կենսական այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են արևային էներգիան և կապի ենթակառուցվածքները: Սա, իր հերթին, օգուտ է բերում հենց ընկերությանը, քանի որ նոր տեխնոլոգիաները մեզ դարձնում են ավելի արդյունավետ, պաշտպանում մեր աշխատակիցներին և հնարավորություն են տալիս բաժնետերերին ապահովել բարձր եկամուտներ:

Համայնքը նույնպես շահում է մեր գործունեությունից. աշխարհագրական տարածքը, որտեղ մենք գործում ենք, ԶՊՄԿ աշխատակիցների գերակշիռ մասի տունն է: Քաջարան քաղաքի աշխատունակ բնակչության մոտ 70%-ն աշխատում է ԶՊՄԿ-ում: Մեր ընկերությունը նրանց բնավայրի և համայնքի անբաժանելի մասն է: Ընկերության աշխատակիցները մեր հաջողության գրավականն են, և նրանց նվիրվածությունն ու փորձն է, որ մեր բիզնեսը դարձնում է եկամտաբեր:

Շրջակա միջավայրի պաշտպանությունը, մեր աշխատակիցների, ինչպես նաև հարակից համայնքների կյանքի որակի բարելավումը և ընկերության էության պահպանումը մեր ԲՍԿ աշխատանքի կարևոր ոլորտներն են:

Մենք երաշխավորում ենք, որ մեր բիզնես պրակտիկան պատասխանատու կմնա շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններում: Դրան նպաստում են բաց հաղորդակցությունը և կազմակերպչական կառուցվածքում հաշվետվողականության տեսքով թափանցիկությունը: Սա կենսական նշանակություն ունի ընկերության հեղինակության և իրավական հետևանքների հետ կապված ռիսկերը նվազագույնի հասցնելու համար: Մեզ համար իրապես կարևոր է պահպանել 70 տարվա ընթացքում ձեռք բերած հեղինակությունը: Մենք նաև կարևորում ենք ընկերության աշխատակիցների և գործընկերների վստահությունը մեր հանդեպ: Այն օգնում է մեզ ավելի բարձր եկամուտներ ապահովել բաժնետերերի համար, արդյունավետ կառավարել ռիսկերը, նվազեցնել շրջակա միջավայրի վրա մեր ազդեցությունը և գործառնական

ԶՊՄԿ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ



Մենք հավատարիմ ենք բնական ռեսուրսների և Նորագույն տեխնոլոգիաների խելամիտ օգտագործմանը, որպեսզի օգնենք մարդկանց իրենց երազանքներին հասնել:

Ծախսերը, ներգրավել և պահպանել բարձրակարգ աշխատակիցներին, տրամադրել առավել լայն բիզնես հնարավորություններ:

ԶՊՄԿ-ն լիովին հավատարիմ է կայուն զարգացման սկզբունքներին, այն է՝ բավարարել ներկայի կարիքները չվնասելով ապագա սերունդների սեփական կարիքները բավարարելու կարողությունը: Այս գլխում նկարագրվում է կայուն զարգացման նկատմամբ մեր մոտեցումը, և ներկայացվում են որոշ ծրագրեր, որոնք նախաձեռնել ենք կայուն զարգացման մեր նպատակներին հասնելու համար:

ԶՊՄԿ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ

ԶՊՄԿ-ն զբաղվում է աշխարհի երկու ամենապահանջված օգտակար հանածոների՝ պղնձի և մոլիբդենի կայուն հետախուզմամբ, արդյունահանմամբ և վերամշակմամբ: Ընկերության ուժեղ մրցակցային առավելություններն այս ոլորտներում օգնում են.



Այս առավելությունների և արդյունաբերության առաջատարության պահպանումը ԶՊՄԿ-ի գործունեության առաջնահերթություններն են: Մենք մշտապես աշխատում ենք դրանց իրականացման ուղղությամբ, և ընկերությունը հավատարիմ է այն արժեքներին, որոնք լավագույնս ցույց են տալիս դա:

<p>1. Որակը և համապատասխանությունը հանդիսանում են բոլոր գործողությունների, գործառնությունների և նախագծերի հիմնական շարժիչ ուժը:</p>	<p>2. Հանքարդյունաբերության ոլորտում առաջատար լինելը պահանջում է անզիջում նորարարություն՝ լինի դա թե՛ ներքին զարգացումների, թե՛ վերջին հետազոտությունների ու հայտնաբերությունների ակարդակով:</p>	<p>3. Ընկերության ղեկավարությունը գիտակցում է, որ իր դերը շատ ավելին է, քան պարզապես գործունեություն կազմակերպելը, և այդ դերը հավակնում է ավելի լավ ապագա ստեղծել:</p>	<p>4. Ֆինանսական հաջողությունը պարզապես այս արժեքներին հետևելու տրամաբանական արդյունքն է և հանդիսանում է ընկերության տեսլականի, արժեքների և համակարգերի արդյունավետ իրականացման վերջնական ապացույցը:</p>
--	---	---	---

ԲՍԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Կայուն պրակտիկաների և պլանավորման սկզբունքներին համահունչ ԶՊՄԿ-ն ավարտեց ԲՍԿ ռազմավարության թարմացումը 2021 թվականի սկզբին: Վերանայված ռազմավարությունը հիմնված է հետևյալ չափանիշների վրա.

- ▶ Հասնել կայուն զարգացման նպատակներին և իրական օգուտ տրամադրել շահագրգիռ կողմերին,
- ▶ Հիմնվել դրական սոցիալական ազդեցության վրա և նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը,
- ▶ Զինված լինել բոլոր անհրաժեշտ գործիքներով, ժամանակին ու ողջամիտ պլանավորմամբ և ռազմավարություն մշակելու կարողությամբ՝ ի պատասխան արագ փոփոխվող մարդկային և բնական միջավայրերի:

Ռազմավարությունը մշակվել է այն ոլորտների վերլուծության հիման վրա, որոնցում ընկերությունն ունի ամենամեծ ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, և համահունչ է Հանքարդյունաբերության ոլորտում կայուն զարգացման ICMM սկզբունքներին, ինչպես նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին:

Համայնքների զարգացումն այն հարցն է, որը ԶՊՄԿ-ի համար խիստ առաջնային է: Մենք ներդրումներ ենք կատարում տեղի բնակչության կրթության, տեղական ենթակառուցվածքները պահպանելու և կառուցելու, ինչպես նաև մեր աշխատուժի հավասարությունն ապահովելու գործում: Նաև վերահսկում ենք, թե ինչպես է մեր ընկերությունը կատարում իր բնապահպանական, սոցիալական և կառավարման պարտավորությունները, ինչպես նաև մեր առջև դնում ենք իրավիճակը բարելավելու նպատակներ:

ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ընկերությունը շարունակական երկխոսություն է վարում շահագրգիռ կողմերի հետ այնպիսի ուղիներով, ինչպիսիք են ամսագիրը, կայքը, կորպորատիվ պատասխանատվությունը և ֆինանսական հաշվետվությունները:

Աշխատակիցներից մինչև բազմազան ԴԿ-ներ՝ մենք ներառել ենք բոլոր շահագրգիռ կողմերին, որպեսզի հստակ պատկերացնենք մեր գործունեության ազդեցությունը նրանց վրա և որոշենք դրա համապատասխանությունը ընկերությանը, նրանց ակնկալիքներին և կարիքներին: Հիմնական հարթակներից մեկը, որը մենք օգտագործում ենք շահագրգիռ կողմերի հետ համագործակցելու համար, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունն է (ԱՃԹՆ/ EITI), որի հիմնադիր անդամներից է ԶՊՄԿ-ն: ԱՃԹՆ-ն նպաստում է բնական ռեսուրսների կառավարման վերաբերյալ բազմակողմ երկխոսության զարգացմանը: Բացի այդ, մենք գիտակցում ենք, որ բոլոր շահագրգիռ կողմերը

կարևոր ազդեցություն ունեն մեր բիզնեսի վրա: Մենք արժանարժեք ենք լավ հարաբերությունների պահպանումը բոլոր նրանց հետ, ովքեր շահագրգռված են ԶՊՄԿ-ի առաջընթացով: Մեր բիզնեսը կախված է դրանից:

ԶՊՄԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

<p>Մենք առանձնացրել ենք կորպորատիվ պատասխանատվության ոլորտում գործունեության ռազմավարական հետևյալ կարևորագույն ոլորտները.</p>	<p>1 ՏԵՂԱԿԱՆ ԳՆԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</p> 
<p>2 ՏԵՂԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</p> 	<p>3 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ</p> 
<p>4 ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ</p> 	<p>5 ՌԵՍՈՒՐՏՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒՄ</p> 
<p>6 ՈՒՂՂԱՀԱՅՅԱՑ ԻՆՏԵԳՐՈՒՄ</p> 	<p>7 ԹՎԱՅՆԱՑՈՒՄ</p> 

ԶՊՄԿ-Ի ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ

- | | |
|---|---|
| <p>ՆԵՐՔԻՆ</p> <ul style="list-style-type: none"> ▶ Ընկերության աշխատակիցներ ▶ Վարձու աշխատողներ ▶ Ժամանակավոր աշխատողներ և ծառայություններ մատուցողներ ▶ Արհմիություններ | <p>ԱՐՏԱՔԻՆ</p> <ul style="list-style-type: none"> ▶ Տեղական համայնքներ և իշխանություններ ▶ Պետական մարմիններ ▶ Տեղական և ազգային ԴԿ-ներ ▶ Տեղական և ազգային բիզնես գործընկերներ ▶ Անդրազգային և միջազգային կազմակերպություններ (օրինակ՝ ՄԱԿ, Համաշխարհային բանկ, ԶՄՖ, ԵՄ, ՎԶԵԲ) |
|---|---|

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՅՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԶՊՄԿ-ն իր գործունեությունը սկսել է 1951 թվականին, իսկ 1962 թվականի սկզբին անցել է բաց եղանակով արդյունահանման: Այս ժամանակագրությունը վկայում է, որ այս տարածաշրջանում հանքարդյունաբերության հետ կապված դրական և բացասական ազդեցությունները հաջողությամբ կառավարվում են գրեթե 70 տարի: Մենք լիովին կենտրոնացած ենք այս հաջողված միտումը շարունակելու և ժամանակակից տեխնոլոգիաների ներուժն օգտագործելու վրա, օրինակ, այսպես կոչվող, ամպային ծածկույթի վրա հիմնված սարքավորումների կառավարման համակարգերի կիրարկումը, որպեսզի շարունակենք դրական ներդրում ունենալ հասարակության մեջ:

Չնայած հանքարդյունաբերությունը որպես ամբողջություն էական ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա, այդուհանդերձ, պղնձի և մոլիբդենի արդյունահանումը անհրաժեշտ է հասարակության և տեխնոլոգիաների զարգացման համար: Պղնձի խտանյութը Հայաստանի

Մենք պարտավորվում ենք սահմանափակել հանքարդյունաբերության բացասական ազդեցությունը և առավելագույնի հասցնել դրական ազդեցությունը ինչպես մեր մարզում, այնպես էլ առհասարակ գյուղալիսնոսների, օրինակ՝ կլիմայի փոփոխության, համատեքստում:

հիմնական արտահանումն է, և, հետևաբար, երկրի և իր ժողովրդի բարգավաճումը պայմանավորված է հանքարդյունաբերությամբ, որի միջոցով էլ Հայաստանը կարող է համաշխարհային շուկայում մրցունակ դերակատար դառնալ:

Մի շարք ծրագրեր ընթացիկ պլանավորման փուլում են, որոնք նպատակադրված են արդիականացնել մեր օբյեկտները և դրանք էկոլոգիապես առավել մաքուր դարձնել: Մենք նաև քայլեր ենք ձեռնարկում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ: ճանապարհների վերանորոգման շնորհիվ հաջողվել է մեր բեռնատարների մեծ մասի ուղեորը վերահղել դեպի M2 մայրուղի՝ տեղական ճանապարհներից հեռու: Սա զգալիորեն նվազեցրել է աղմուկի, փոշու և պոտենցիալ ճանապարհատրանսպորտային պատահարների մակարդակները:

Մեր գործունեության հիմնական դրական ազդեցությունները ներառում են անվտանգ և շահավետ զբաղվածությունը, անհատական զարգացումը և ենթակառուցվածքների ֆինանսավորումը:

Սա մեծապես հավասարակշռում է մեր գործունեության հիմնական բացասական ազդեցությունները, որոնց թվին են դասվում չվերականգնվող բնական ռեսուրսների օգ-

տագործումը, շրջակա միջավայրի աղտոտումը և ազդեցությունը աշխատուժի, տեղական համայնքների առողջության վրա և այլն:

ԱՐԺԵՇՂԹԱ

Մեր արժեզրեան ներառում է հետախուզում, պաշարների գնահատում, ճարտարագիտություն, թույլտվություններ, զարգացում/շինարարություն, հանքարդյունաբերություն, լոգիստիկա, վերամշակում և վաճառք, շահագործումից հանում, վերականգնում և մշտադիտարկում: Արժեզրեայում վերլուծել ենք մեր գործունեության դրական և բացասական ազդեցությունների ներուժը: Դիտարկել ենք ազդեցության հետևյալ կատեգորիաները.

- ▶ աշխատանքի և աշխատանքային պայմաններ,
- ▶ ժողովրդագրական և գենդերային ազդեցություններ,
- ▶ տնտեսական ազդեցություն և զբաղվածություն,
- ▶ համայնքի կենսագործունեության անվտանգություն,
- ▶ ազդեցությունները ենթակառուցվածքային ծառայությունների որակի և մատչելիության վրա,
- ▶ ազդեցությունները էկոհամակարգային ծառայությունների, զբոսաշրջության և մշակութային ժառանգության վրա,
- ▶ կուտակային ազդեցություններ:

ԶՊՄԿ-Ի ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՂԹԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հանքարդյունաբերական գործունեության միջոցով մատակարարման կարևոր շղթայում ԶՊՄԿ-ն զբաղեցնում է առաջնային դիրք, որն ընդգրկում է ամբողջ աշխարհը: Պղնձի և մոլիբդենի խտանյութը բեռնատարներով տեղափոխում ենք Երևան, որը Քաջարան քաղաքից գտնվում է մոտ 350 կմ հեռավորության վրա: Այստեղ պղնձի և մոլիբդենի խտանյութերը վերաբեռնվում են և բեռնատարներով անցնում 700 կմ, հասնում Վրաստանի Հանրապետության Բաթում քաղաքի գլխավոր նավահանգիստ: Այնուհետև, խտանյութերը առաքվում են աշխարհի մի շարք հասցեատեր նավահանգիստներ:

ՁՊՄԿ-Ի ԱՐԺԵՆՈՒՄ

ԴՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ


- + Աշխատանքի հնարավորություններ
- + Տեղական համայնքների և պետական բյուջեներ հարկային մուտքերի ավելացում
- + Զգալի ներդրում տեղի գյուղական համայնքների կյանքի որակի և կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ
Համայնք

ԲԱՏԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

- Տեղական գյուղական վայրերում ճանապարհատրանսպորտային պատահարների ռիսկի ավելացում
- Որոշ ոլորտների մրցունակության նվազում (գյուղատնտեսություն, զբոսաշրջություն և մշակութային ժառանգություն)

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ
Կառավարում



- + Մարդկային կապիտալի զարգացում (կարողությունների զարգացում, զբաղվածություն, կրթություն, վերապատրաստում)
- + Աշխատանքի, կենսագործունեության անվտանգության հետ կապված ռիսկերի նվազեցմանն ուղղված ներքին կանոնների և գործառնական հրահանգների ընդունում
- + Ներդրումներ կենսաբազմազանության պաշտպանության և վերականգնման ուղղությամբ
- + Ընկերության գործունեության շրջանակում առկա գյուղական վայրերի ճանապարհների և տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավում
- + Թափոնների կառավարում

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ
Շրջակա միջավայր

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ
Աշխատակիցներ

- Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ մարդու առողջության և ապրուստի համար հետևանքներով
- Ջրի որակի և ջրի աղբյուրների հասանելիության խնդիր
- Ազդեցություն հողօգտագործման ավանդական ձևերի և կենսամիջոցների վրա
- Օդի որակի վատթարացում

* Եթե բացասական ազդեցությունը պատշաճ չի կառավարվում, ինչը ՁՊՄԿ-ի դեպքը չէ:

Ֆերոմոլիբդենը լրացուցիչ քայլ է պահանջում մատակարարման շղթայում. մոլիբդենի խտանյութը բեռնատարներով տեղափոխվում է Երևանի ծուլարաններ՝ ֆերոմոլիբդենի արտադրության համար: Այնուհետև, ֆերոմոլիբդենն անցնում է նույն ճանապարհով, ինչ պղնձի և մոլիբդենի խտանյութերը:

ԶՊՄԿ-ն նաև, տեղական տնտեսության զարգացմանը աջակցելու համար հնարավորինս շատ ծառայություններ և նյութեր է գնում տեղական աղբյուրներից: 2021թ. ԶՊՄԿ-ի մատակարարների 77%-ը կազմել են կամ մարզի, կամ տեղական հայկական սպասարկող ընկերությունները:

ՌԻՍԿԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր գործունեության հետ կապված էական ռիսկերի մեծ մասը շրջակա միջավայրին և մարդկանց սպառնացող վտանգներն են, ինչպիսիք են, օրինակ, վթարները, որոնք կարող են ազդել աշխատողների առողջության կամ բնական միջավայրի վրա: Ընկերությունը նույնպես ենթարկվում է գործառնական և ֆինանսական ռիսկերի:

Մենք վերլուծում ենք բոլոր ռիսկերը և ազդեցությունները, որոնք կարող են նշանակություն ունենալ բիզնեսի վրա: Ռիսկերը դասակարգվում են ըստ առաջացման հավանականության և հետևանքների ծանրության: Դրանք մշտապես վերահսկվում են: Ընկերությունը ռիսկերը գնահատում է համաձայն ISO 31000:2018-ի:

Ընկերությունը նաև վերահսկում է արժեչղթան և ամբողջ ոլորտը (տե՛ս էջ 22): Զննարկումները, թե ինչպես լավագույնս օգտագործել և զարգացնել այդ հնարավորությունները, անցկացվում են կառավարման ամենաբարձր մակարդակներում:

Ձեռնարկությունների և գործընթացների արդիականացումը, արդյունավետության բարձրացումը, ավտոմատացումը և թվայնացումը, ինչպես նաև ուղղահայաց ինտեգրումը այս պահին ԶՊՄԿ-ի հիմնական առաջնահերթություններն են: Պլանավորման փուլերում գտնվող արդիականացման նախագծի օրինակներից է քլաուդի (այսպես կոչված՝ ամպային ծածկույթի) վրա հիմնված սարքավորումների կառավարման համակարգը, որը թույլ կտա վերահսկել վառելիքի սպառումը և անվադողերի մաշվածությունը՝ դրանով իսկ նվազեցնելով սարքավորումների շահագործման և պահպանման ծախսերը, շրջակա միջավայրի վրա գործունեության ազդեցությունը:

ՆՅՈՒԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԶՊՄԿ-ում կարևոր խնդիրները սահմանվել են Խմբի մակարդակում առկա լավագույն փորձի կիրառման հիման վրա: 2021 թվականին բաժնետիրական կապիտալի կառուցվածքի փոփոխությունների պատճառով դրանք կիսամապատասխանեցվեն Խմբի նոր կարևոր թեմաներին, որոնք կծագեն 2022 թվականին:



ԲՍԿ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՏԵՑՈՒՄԸ

ԶՊՄԿ-ն սահմանել է հստակ նպատակներ, որոնք առաջնորդում են ԲՍԿ-ի նկատմամբ ընդհանուր մոտեցումը:

- 1 Ընկերությունը պարտավորվում է նվազեցնել աշխատավայրում անվտանգության միջադեպերի թիվը և պահպանել մահվան դեպքերի գրոյական թիվը: ԶՊՄԿ-ի ռիսկերի վերահսկման ծառայությունը կառավարում է ձեռնարկության աշխատանքային կենսագործունեության անվտանգությունը՝ ա) աշխատանքի պաշտպանության և անվտանգության աշխատակիցների միջոցով, բ) վթարների գրանցման, աշխատանքային վթարների ժամանակին հետաքննության միջոցով, գ) աշխատակիցների հատուկ ուսուցման միջոցով՝ բարձրացնելու իրազեկվածությունը և աշխատանքային հնարավոր ռիսկերի նկատմամբ պատրաստվածությունը: Բացի այդ, ամեն տարի պետական ստուգումներ են իրականացվում բարձր ռիսկային օբյեկտներում, ինչն էլ ավելի է ամրապնդում բոլոր շահագրգիռ կողմերի անվտանգությունը:
- 2 Մեկ այլ կարևոր մարտահրավեր է ազդակիր համայնքների անձնակազմի հմտությունների բարելավումը: Այս նպատակին հասնելու միջոցառումները ներառում են վերապատրաստման և զարգացման հնարավորությունների հետագա ֆինանսավորումը և խթանումը, ինչպես նաև անձնակազմի հմտությունների զարգացումը:

- 3 Ընկերությունը շարունակում է ներդրումներ կատարել համայնքային ծրագրերի, նախաձեռնությունների և ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ: ԶՊՄԿ-ն ֆինանսավորել է Զաջարան քաղաքի կամրջի վերակառուցումը, փողոցների ու մայրերի ասֆալտապատումը:
- 4 Ընկերությունը ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով հավատարիմ է մնում ջրի, էներգիայի սպառման և թափոնների կրճատման քաղաքականությանը: Սա ենթադրում է միջոցների և տեխնոլոգիաների բացահայտում, մշակում և իրականացում՝ նվազեցնելով էներգիայի սպառումը և թափոնները՝ միաժամանակ պահպանելով բնական ռեսուրսները:
- 5 Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ԶՊՄԿ-ն պարտավորվում է հնարավորինս ցածր պահել բնապահպանական միջադեպերի թիվը՝ բարձրացնելով աշխատակիցների իրազեկվածությունը, ուսուցումը և համապատասխանությունը կենսագործունեության անվտանգության միջոցառումներին: Կառավարման ոլորտում ընկերությունը գրոյական հանդուրժողականություն է ցուցաբերում երեխաների շահագործման և աշխատավայրում խտրականության նկատմամբ. նույնը՝ կոռուպցիայի, խարդախության և կաշառակերության դեպքերում: Այս բոլոր խնդիրները վերահսկվում են

«Զարգացողից» մինչև «Կայուն»

MOODY'S ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՅՅԻՆԳԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

2021 թվականի հունիսին Moody's Investors Service-ը բարձրացրել է ԶՊՄԿ-ի արտարժույթի վարկանիշը B3-ից B2՝ կայուն կանխատեսմամբ: Թարմացումն արտացոլում է ավելի ցածր լծակներ, EBITDA-ի ավելացում պղնձի աճող գների ֆոնին և 2021-2022 թվականներին պարտքի պլանավորված կրճատումներ, ինչպես նաև բնապահպանական ազդեցությունը նվազեցնելու պլաններ:

- անվտանգության աշխատակիցների և համապատասխանության հարցերով թիմերի կողմից:
- 6 Ընկերությունը ստեղծել է Բնապահպանական և սոցիալական վերահսկողության կոմիտե, որը յուրաքանչյուր եռամսյակ վերլուծում է ընկերության գործունեության արդյունքները կայուն զարգացման քաղաքականությանը համապատասխանելու տեսանկյունից: (Այս մասին ավելի մանրամասն տե՛ս «Կառավարում» բաժնում):

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

ԶՊՄԿ-ն ներգրավված է մի քանի սոցիալական ծրագրերում, որոնց նպատակն է աջակցել տեղական համայնքներին՝ ընդհանուր արժեք ստեղծելով ողջ արժեքային շղթայում: Ընկերությունը տարեկան բյուջե է հատկացնում տեղական համայնքների զարգացման ծրագրերը ֆինանսավորելու համար: Այս նախագծերը, ի թիվս այլ արժեքների, նպաստում են կրթությանը, մշակույթին և սպորտին:

Մեր վերջին ծրագրերից մի քանիսը ներառում էին, օրինակ, համակարգչային գրագիտության ուսուցում տեղացի աշխատակազմի համար, սպորտային մրցույթների հովանավորում, տեղական մշակութային կազմակերպություններին բնահրային նվիրատվություններ և աղքատության շեմին գտնվող մարդկանց աջակցություն:

Ֆինանսավորումը բաշխվել է աղյուսակում նշված ոլորտների միջև.

ԶՊՄԿ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

No.	Նախագծի տեսակը	Կայուն զարգացման նպատակները	Գումարը (ՀՀ դրամ, '000)	Գումարը (ԱՄՆ դոլար, '000)
1.	Շինարարական գործողություններ սոցիալական սեկտորում	3, 4, 9, 11, 17	337,158	669
2.	Սոցիալական նախագծեր և ներդրումներ համայնքներին	1, 2, 3, 4, 8, 9, 11, 16, 17	1,317,029	2,614
3.	«Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամ	1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 11, 17	2,227,866	4,422
Ընդամենը			3,882,053	7,705

▲ 2021թ. ընդհանուր բյուջեն՝ փոխանակված ՀՀ դրամից ԱՄՆ դոլարի 31.12.2021թ. փոխարժեքով

▼ Կայուն զարգացման նպատակները՝



ԱՊԱԳԱ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

ԶՊՄԿ-ն նպատակ ունի այս տասնամյակի վերջում ավանդական հանքարդյունաբերական ընկերությունից վերածվել գերժամանակակից ձեռնարկության՝ ամբողջությամբ թվայնացված ակտիվներով և տվյալների վրա հիմնված գործընթացներով:

Ընկերությունը ներկայում իրականացնում է թվային ռազմավարություն, որն ընդգրկում է ամեն ինչ՝ արտադրական գործընթացներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգից մինչև վարչական գործառնություններ և տեխնիկական աջակցություն:

2021 թվականին թվային նախագծերի իրականացման համար բյուջեով նախատեսված ընդհանուր գումարը կազմել է շուրջ 86,4 մլն դրամ կամ 180 հազար դոլար, որի 45%-ը հատկացվել է արտադրական գործընթացների թվայնացմանը (արտադրության թվային մոնիտորինգ, արտադրության հոսքի մոնիտորինգ, ջրաչափական կետեր, վառելիքի կառավարում, կենսագործունեության անվտանգության կառավարում, դիսկերի կառավարում՝ ներառյալ բնապահպանական դիսկեր):

2021 թվականին ներդրումներ են կատարվել նաև հետևյալ երեք հիմնական ուղղություններով՝ դիգեյլային ավտոպարկի նորացում, ավտոհավաքակայանի կառավարում և շահագործման կառավարման կենտրոն:

Թվային ռազմավարությունն իրականացնելով՝ ընկերությունը նպատակ ունի լիարժեք ավտոմատացման միջոցով մեծացնել սարքավորումների ֆունկցիոնալությունը, ինչը կհանգեցնի:

- ▶ ռեսուրսների բազայի ամբողջական պատկերացմանը և հանքարդյունաբերության օպտիմալացմանը,
- ▶ «հանքավայրից մինչև հաճախորդ» մատակարարման շղթայի գործընթացի օպտիմալացմանը,
- ▶ սխալների կանխատեսման և ախտորոշման գործընթացների բարելավմանը՝ սպասարկման նոր ռազմավարությանը անցնելիս:

ԶՊՄԿ-ն մշտապես աշխատում է իր գործունեությունը հնարավորինս պարզեցնելու և արտադրողականությունը բարելավելու ուղղությամբ:

Ընկերությունը նպատակ ունի մեծացնել արժեքի ստեղծումը ընկերության ներսում և երկրում՝ բարելավելու մոլիբդենի և պղնձի խտանյութերի արտադրության արդյունավետությունը, շահութաբերությունը և թափանցիկությունը:

Մենք մշակում ենք մի շարք նախագծեր՝ արդիականացնելու և թվայնացնելու սարքավորումներն ու գործընթացները:

Հետագա ներդրումների նպատակը հետևյալին հասնելն է.

- ▶ հանքաքարի արդյունահանման ծավալների ավելացում,
- ▶ ավելացված արժեքի ստեղծում,
- ▶ հավելյալ աշխատատեղերի ստեղծում,
- ▶ Հայաստանի Հանրապետության տնտեսության հզորության և կայունության բարձրացում:

2021 թ. թվային նախագծերի իրականացման ընդհանուր բյուջե՝


ՀՀ դրամ

86.4 միլիոն կամ

ԱՄՆ դոլար

180,000

ՀԱՄԱՅՆՔ



Տեղական ազդեցիկ աջակցության և համայնքների հետ հաղորդակցության բաց ուղիների պահպանումը ԶՊՄԿ-ի առաջնահերթություններից է: Մենք պարբերաբար ներդրումներ ենք կատարում տեղական ենթակառուցվածքներում և մարդկային կապիտալում՝ բարելավելու ընկերության աշխատակիցների և իրենց ընտանիքների կյանքի որակը: Մեր ցանկությունն է ստեղծել ներառական հասարակություն և օգնել տեղական համայնքներին բարգավաճել՝ թե՛ տնտեսապես, թե՛ սոցիալապես, և թե՛ բնապահպանական մակարդակներում:

<h2>ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԹՎԵՐ. ԶԱՄԱՅՆՔ</h2>		<p>ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆԱԽԱԳԾԵՐ</p> <p>Մեր ներդրումը մարզի զարգացմանը</p> <ul style="list-style-type: none"> ➔ Կամուրջների և ճանապարհների կառուցում, հողային ռեսուրսի վերականգնում ➔ Սպորտային, մշակութային և զվարճանքի կենտրոնների կառուցում ➔ Կոմունալ ծառայությունների արդյունավետության բարելավում 	<p>Մարզի զարգացման համար ներդրել ենք 3,8 մլրդ դրամ (7,8 մլն դոլար), որից 1,65 մլրդ դրամը (3,35 մլն դոլար) ուղղվել է շինարարական և սոցիալական ծրագրերի իրականացմանը:</p>
<p>ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ</p> 			
		<p>ԱՇԽԱՏԱՆՔ ԶԱՄԱՅՆՔՈՒՄ</p> <p>Մեր ներդրումը մարզում՝ կյանքի բարելավմանը</p> <ul style="list-style-type: none"> ➔ Կանոնավոր բարեգործական ծրագրեր ➔ Սպորտի և մշակույթի զարգացում ➔ Մասնագիտական ուսուցման հովանավորում ➔ Աշխատակիցների կամավորական նախաձեռնություններ ➔ Կրթական ծրագրեր՝ աշխատակիցների, նաև կարիքավոր ընտանիքների երեխաների համար 	<p>ՏԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՆԵՐԴՐՈՒՄ՝ ԶԱՐԿԵՐԻ ՏԵՄԵՈՎ, 2021Թ.</p>
<p>97% Աշխատողների 97%-ը այս մարզից է՝</p> <p>77% Մեր մատակարարների 77%-ը գտնվում է այս մարզում</p>			<p>62.6 միլիարդ ՀՀ դրամ կամ 124.4 միլիոն ԱՄՆ դոլար</p>
			<p>Զամաշխարհային բանկը գնահատում է*, որ ՀՆԱ-ի բազմապատկիչ էֆֆեկտը՝ հիմնված հանքարդյունաբերության արտադրանքի, համախառն ավելացված արժեքի և զբաղվածության աճի վրա, Հայաստանի համար կազմում է 1,8, մինչդեռ զբաղվածության բազմապատկիչը՝ 5,3:</p> <p>* Հայաստան. Զանքային հատվածի կայունության ռազմավարական գնահատում, 2016թ.</p>

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ԶՊՄԿ-ն ապահովում է զբաղվածության հնարավորություններ և խթանում տնտեսական ակտիվությունը մարզում: 2021 թվականին ընկերությունը 158 միլիարդ դրամ (314 միլիոն դոլար) ուղղակի ներդրում է կատարել մարզում՝ գործառնական ծախսերի ընդհանուր արժեք, աշխատակիցների աշխատավարձեր ու նպաստներ, հողատերերին տրվող վճարումներ և պետական ներդրումներ:

Անցած ֆինանսական տարվա ընթացքում ընկերությունը ընդհանուր հաշվարկմամբ ներդրել է 3,8 մլրդ 33 դրամ կամ 7,9 մլն ԱՄՆ դոլար՝ Սյունիքում իրականացված սոցիալական ծրագրերում, որոնց շրջանակներն ընդգրկել են առողջապահական, կրթական և բնապահպանական նախաձեռնություններ, բիզնեսի զարգացման հեռանկարներ: COVID-19 համաճարակի և նախորդ տարիներին մի շարք ենթակառուցվածքային ծրագրերի հաջող ավարտի պատճառով 2021 թվականին մեր ներդրումների ծավալը մարզում նախորդ տարվա համեմատ նվազել է 41,7%-ով (9,3 մլրդ դրամ / 17,8 մլն ԱՄՆ դոլար):

Մենք ձգտում ենք հասնել դրական սոցիալական արդյունքների և բարելավել բնակչության կենսամակարդակը:

Մարզում սոցիալական ծրագրերին մեր ֆինանսական պարտավորության նպատակը դրական սոցիալական արդյունքների հասնելն է և համայնքի յուրաքանչյուր բնակչի կենսամակարդակի բարելավումը:

Մարզի սոցիալական նախագծերում ընդհանուր ներդրումները 2021թ-ին

3.8 միլիարդ 33 դրամ կամ 7.9 միլիոն ԱՄՆ դոլար



Հանքարդյունաբերությունը ապահովում է կայուն, հուսալի զբաղվածության հնարավորություններ և խթանում տնտեսական ակտիվությունը տեղական համայնքներում: Հաճախ դրանք ոլորտներ են, որտեղ տնտեսական այլ հնարավորությունները բավականին սահմանափակ են: Հանքարդյունաբերության բնապահպանական և սոցիալական ազդեցությունները փոխհատուցվում են տնտեսական և սոցիալական զգալի օգուտներով՝ ներառյալ հիմնական հումքի արտադրությունը, զբաղվածությունը, փոքր բիզնեսի զարգացումը, հարկերի և ռոյալթիների հոսքերը, ուսուցման և հմտությունների զարգացումը, սոցիալական և տնտեսական ծրագրերը:


ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆԵՐԱՌՈՒՄ Է ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐ.

Տնտեսական ներդրում մարզի զարգացման համար	Ենթակառուցվածքի զարգացում	Համայնքի զարգացում
Կենտրոնացված/տեղական բյուջե վճարվող հարկեր	Կամուրջների և ճանապարհների վերակառուցում	Կանոնավոր բարեգործական ծրագրեր
Տեղի մարդկանց աշխատանքի ապահովում	Հողերի վերականգնում	Սպորտի և մշակույթի զարգացում
Սոցիալական տեղական ենթակառուցվածքի (տրանսպորտ, էներգիա) զարգացում	Սպորտային, մշակութային և զվարճանքի կենտրոնների կառուցում	Մասնագիտական ուսուցման հովանավորում
	Կոմունալ ծառայությունների արդյունավետության բարելավում	Աշխատակիցների կամավորություն

ՊԱՅՊԱՆՆԵԼՈՎ ԿԱՊԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ

Մենք համագործակցում ենք տեղական համայնքների հետ և վարում շարունակական երկխոսություն՝ հասկանալու համար, թե ինչպես է մեր գործունեությունը ազդում նրանց կյանքի որակի, մշակութային և հոգևոր ժառանգության վրա: Մենք միասին նպատակներ ենք սահմանում համայնքի համար կարևոր ոլորտներում:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ



▲ Քաջարան. քաղաքի խորհրդանիշ արձանը

ԶՊՄԿ-ի ազդակիր համայնքներում (ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային) մշտական բնակիչները՝ ըստ 2016 թվականի մարդահամարի.

ԱՐԾՎԱՆԻՎ		ԼԵՌՆԱՁՈՐ		ԱՃԱՆԱՆ	
Սեռը (%) ♂50 / ♀50		Սեռը (%) ♂47 / ♀53		Սեռը (%) ♂50 / ♀50	
Մարդկանց քանակը 538		Մարդկանց քանակը 855		Մարդկանց քանակը 190	
ՉԱՓՆԻ		ՍՅՈՒՆԻԷ		ՍԵՎԱՔԱՐ	
Սեռը (%) ♂54 / ♀46		Սեռը (%) ♂51 / ♀49		Սեռը (%) ♂50 / ♀50	
Մարդկանց քանակը 70		Մարդկանց քանակը 1,234		Մարդկանց քանակը 94	
ՔԱՋԱՐԱՆ ԳՅՈՒՐ		ԿԱՊԱՆ		ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔ	
Սեռը (%) ♂51 / ♀49		Սեռը (%) ♂45 / ♀55		Սեռը (%) ♂49 / ♀51	
Մարդկանց քանակը 252		Մարդկանց քանակը 42,900		Մարդկանց քանակը 7,061	

Տեղական համայնք
 0–18 տարեկան
 19–45 տարեկան
 46–60 տարեկան
 60+ տարեկան

Ընկերությունն իրականացնում է շահագրգիռ կողմերի մանրակրկիտ կառավարում, որպեսզի ներգրավվի հանրությանը և քաջատեղյակ լինի նրանց մտահոգություններին: Մենք լիովին պատասխանատու ենք՝ մեր հնարավորությունների առավելագույն չափով մեղմելու հանքարդյունաբերության գործունեության բացասական ազդեցությունները մարդկանց և շրջակա միջավայրի վրա:

Ընկերությունը մշակել և իրականացրել է բողոքների ներկայացման ընթացակարգ՝ տեղական համայնքից ստացված յուրաքանչյուր բողոք լուծելու համար: Բողոքները դասակարգվում են՝ աննշան, չափավոր կամ մեծ՝ պայմանավորված բարձրաձայնված խնդրով:

Չարցերը բաժանվում են ոլորտների՝ առողջություն, հող, շրջակա միջավայր, հեղինակություն, որոնց առնչությամբ 2021 թվականին ԶՊՄԿ-ն հաջողությամբ լուծել է բազմաթիվ բողոքներ:

Հիմնական խնդիրները, որոնք բացահայտվել են շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների և քննարկումների ժամանակ, ինչպես նաև տարբեր հանրային նախագծերի իրականացման ընթացքում, վերաբերում են առողջապահական, տնտեսական և բնապահպանական խնդիրներին, օրինակ՝ օդի աղտոտվածություն, ջրի աղտոտվածություն, հիվանդություններ, սննդի աղտոտվածություն, անդորրի խաթարում հողի փոփոխություն, ճանապարհատրանսպորտային պատահարներ, առողջապահություն, քաղաքային միգրացիա, ենթակառուցվածքների առկայություն և որակ, էկոհամակարգի ռիսկեր, զբոսաշրջություն, մշակութային ժառանգություն և տնտեսական կախվածություն:

ՌԻՍԿԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ԶՊՄԿ-ն բացահայտել է հետևյալ ցուցանիշները՝ չափելու համար հանքարդյունաբերական գործունեությունից բխող և տեղական համայնքի վրա ազդող ռիսկերի ցիկլը: Ընկերությունը մշակել և իրականացրել է հակաքայլեր՝ ելնելով հինգ չափանիշներից.

- ▶ **Հավասարություն և բազմազանություն**
- ▶ **Զբաղվածություն**
- ▶ **Տնտեսական գործունեություն**
- ▶ **Կենսագործունեության անվտանգություն**
- ▶ **Ենթակառուցվածք**

Ռիսկերի նվազեցման միջոցառումների մոնիտորինգի ցուցիչներ	Ռիսկի կարգը	Երկարաժամկետ	Տարեկան
Արտագաղթի միտում, քաջարան	Աշխատանք	✓	
Հանրային խորհրդակցություններում և սոցիալական նախագծերում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվ	Աշխատանք	✓	
ԶՊՄԿ-ում երկարաժամկետ պայմանագրերով և ենթապայմանագրերով աշխատողների ընդհանուր թիվ	Աշխատանք		✓
ԶՊՄԿ ավտոհավաքակայանին ենթապատկան տրանսպորտային միջոցների մասնակցությամբ ճանապարհատրանսպորտային պատահարների թիվ	Կենսագործունեություն անվտանգություն		✓
Հաշվետու տարում առաջին բուժօգնություն վերապատրաստված ԶՊՄԿ-ի աշխատակիցների ընդհանուր թիվ	Կենսագործունեություն անվտանգություն		✓
ԶՊՄԿ-ում և տուժած համայնքներում իրականացված աղետների ռիսկի կառավարման վերաբերյալ միջոցառումների և վերապատրաստման դասընթացների ընդհանուր թիվ	Կենսագործունեություն անվտանգություն		✓
Հաշվետու տարվա համար ԶՊՄԿ-ի ցեխատար խողովակաշարի վթարների ընդհանուր թիվ	Ենթակառուցվածք		✓
Հաշվետու տարում տիղմային խողովակաշարերի վթարների հետևանքով աղտոտված գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերես	Ենթակառուցվածք		✓
ԶՊՄԿ-ում ուղղակիորեն կամ անուղղակիորեն աշխատող կանանց հարաբերակցություն	Հավասարություն և բազմազանություն	✓	
Տեղական բյուջեներին և տեղական մատակարարներին վճարված հարկերի և տուրքերի ընդհանուր գումար	Տնտեսական գործունեություն		✓

Մշտադիտարկման հետևյալ ցուցանիշները պարզում են, թե ինչ առաջընթաց ենք գրանցել տեղական համայնքների հետ մեր ներգրավվածության հարցում: Այս ցուցանիշները մշտադիտարկվում են տարեկան ժամանակահատվածով՝ հատուկ ուշադրություն դարձնելով շահագրգիռ կողմերի կառավարմանը, տեղեկատվության բացահայտմանը և բողոքների լուծման մեխանիզմներին:

Մշտադիտարկման ցուցանիշներ	Տարեկան
2021 թվականի ընթացքում տուժած համայնքներում անցկացված հանրային մեկնաբանություններ և խորհրդակցություններ	✓
ԶՊՄԿ-ի կողմից կազմակերպված քննարկումների և խորհրդատվական հանդիպումների մասնակիցներ	✓
Չաշվետու տարվա ընթացքում ԶՊՄԿ-ի կողմից առցանց հրապարակված բնապահպանական և սոցիալական խնդիրներին առնչվող նյութեր և հրապարակումներ գանգվածային լրատվամիջոցներում	✓

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԶՈՒՄ

Բացի կայուն, երկարաժամկետ զբաղվածություն ապահովելուց, մենք տարեկան ներդրումներ ենք կատարում մարզում, ինչպես նաև բիզնեսում: 2021 թվականին մենք ֆինանսական աջակցություն ենք ցուցաբերել.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

- ✓ Տեղական ենթակառուցվածքների սպասարկում և Նոր օբյեկտների (ճանապարհներ, հասարակական շենքեր, սպորտային օբյեկտներ, էլեկտրամատակարարում, կոյուղու համակարգեր և այլն) կառուցում և քառարանում և Կապանում
- ✓ Մարզային առողջապահական ենթակառուցվածքների սպասարկում
- ✓ Արծվանիկ, Սյունիք և Քաջարան համայնքների հողերի վերականգնման և անտառվերականգնման ուղղված շտաբային նախաձեռնություններ

ՅՈՎԱՆԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Նվիրատվություններ տուժած համայնքների կարիքավոր ընտանիքներին
- ✓ Կապան և Քաջարան քաղաքների մշակութային միջոցառումների հովանավորություն
- ✓ Սպորտային միջոցառումների հովանավորություն ազդակիր բոլոր համայնքներում

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶՊՄԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

- ✓ Առողջություն. արձակուրդի ընթացքում ճանապարհորդության և կացարանի սուբսիդիաներ
- ✓ Սպորտ և հանգիստ

- ✓ Ծարունակական կրթություն. ուսման վարձի սուբսիդավորում

ԶՊՄԿ-ն նաև 1,65 մլրդ դրամի (3,35 մլն դոլար) ֆինանսավորում է տրամադրել Սյունիքի մարզում շինարարական և սոցիալական ծրագրերի համար, ինչպիսիք են դպրոցների և մանկապարտեզների վերակառուցումն ու հիմնանորոգումը, վարչական շենքերի և փողոցների բարեկարգումը, մանկական խաղահրապարակների կառուցումը և այլն: Ընկերությունը ընդհանուր առմամբ նվիրաբերել է 2,23 մլրդ ՀՀ դրամ (4,51 մլն ԱՄՆ դոլար) սոցիալական, մշակութային և սպորտային միջոցառումներին. կատարել է բնակարային նվիրատվություններ կարիքավոր ընտանիքներին և անհատներին, հասարակական և բարեգործական կազմակերպությունների միջոցով աջակցություն է ցուցաբերել Քաջարանի, Կապանի, Չափնիի, Սևաքարի, Աճանանի, Լեռնաձորի, Արծվանիկի և Սյունիքի տեղական համայնքներին:

Ներկայում ընկերության բնապահպանական բաժինն աշխատում է կրթական հաստատությունների հետ՝ տուժած համայնքների բնակիչների շրջանում բնապահպանական մշակույթի մասին իրազեկվածության բարձրացման նախաձեռնությամբ:

ՏԵՂԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԸ

Մեր մատակարարների 77%-ը կամ Քաջարանից է, կամ մարզի տեղական սպասարկման հայկական ընկերություններից:

Անցած տարվա ընթացքում մենք մշակել ենք մատակարարների գնման գործընթաց, որի նպատակն է բացահայտել ցանկացած խնդիր, ինչպիսին կարող է լինել սխալ վարքագիծը կամ կոռուպցիան՝ օգտագործելով միջազգային տվյալները: Մենք պարտավորվում ենք բիզնես վարել միայն այնպիսի մատակարարների և այլ բիզնես գործընկերների հետ, ովքեր կրտսում են մեր արժեքները և լրջորեն են վերաբերվում իրենց դիրքին ու պարտականություններին:

Մենք օգտագործում ենք մատակարարների ստուգման գործընթաց՝ համոզվելու համար, որ մեր բիզնես գործընկերները կիսում են մեր արժեքները:

ԶՊՄԿ-ն հավատարիմ է վստահության վրա հիմնված մատակարարների հետ երկարաժամկետ հարաբերությունների զարգացմանը: Մենք նաև համագործակցում ենք մատակարարման շղթայի արտաքին որոշումներ կայացնողների հետ՝ հավելյալ արժեք ստեղծելու և ծախսերի կրճատման նախաձեռնություններ սկսելու համար:

Մենք ուշադիր դիտարկում ենք գործող մատակարարների հետ պայմանագրերը շարունակելու և երկարացնելու հնարավորությունը և վերահսկում գները: Դետևողական ենք, որ մեր բոլոր մատակարարները հետևեն ընկերության էթիկայի կանոններին և հակակոռուպցիոն քաղաքականությանը: Մենք նաև ապահովում ենք, որ մատակարարները հարգեն մարդու իրավունքները և մասնակցեն շրջակա միջավայրի կառավարմանը: Վերահսկում ենք կարևորագույն ապրանքների առկայությունը, որոնք ազդում են արտադրության և մատակարարների ճկունության վրա՝ հատկապես COVID-19 համաճարակի հետևանքով: Մենք նաև թարմացրել ենք մատակարարման շղթայի քաղաքականությունը, ընթացակարգերը և գործընթացները, որպեսզի ապահովենք գնումների գործընթացի արդար և թափանցիկ լինելը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Այն համայնքներում, որտեղ գործում ենք, մեր առաջնահերթությունը տնտեսական հնարավորությունների ստեղծումն է: Դենց այստեղ են մեր ուժեղ կողմերը, և մեր նպատակն է շարունակել խթանել տնտեսական ակտիվությունը մարզում՝ աշխատանքի ընդունելով տեղացիներին, գնելով տեղական արտադրանք և ներգրավելով տեղական ծառայություններ:

Մարզում տնտեսական ակտիվության շարունակական խթանումը մեր նպատակն է:


Մենք ակնկալում ենք, որ COVID-19 համաճարակի հետևանքները կշարունակեն ազդել տեղական համայնքների վրա գալիք տարիներին, ուստի կկենտրոնանանք կրթության և ուսման հնարավորությունների վրա ներդրումներ կատարելու վրա և կվերահսկենք ներդրումների ազդեցությունը համայնքի անդամների համար երկարաժամկետ զբաղվածության հնարավորություններ ապահովելու համար: Նաև կշարունակենք աշխատանքը տեղական մատակարարների զարգացման և տեղական բիզնեսների համար գնման նախապատվություններ տրամադրելու ուղղությամբ:

ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ

ԶՊՄԿ-ն գործադրում է բոլոր ջանքերը՝ հասնելու և պահպանելու տեղական համայնքների ճանաչումը, որտեղ գործունեություն է իրականացնում: Ընդհանրապես, հայ հասարակության մեջ առկա դժվարությունների պատճառով շատ համայնքներում, հատկապես Քաջարանում, Կապանում, մեծ աջակցություն կա հանքարդյունաբերական գործունեությանը՝ ընձեռած հնարավորությունների շնորհիվ:

Հայաստանում որակավորված հանքագործների թիվը քիչ է, բայց որակյալ հնժեներների, երկրաբանների, հանքարդյունաբերության ոլորտի տնտեսագետների և այլ մասնագիտացում ունեցողների սուր պակաս կա, ինչը լուրջ սպառնալիք է մարզից նման աշխատակիցներ ներգրավելու մեր հավակնությունների համար:

ԶՊՄԿ-ն սերտ համագործակցում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի հետ՝ առաջարկելով դասընթացներ տարբեր ոլորտներում, օրինակ՝ հանքարդյունաբերության գործընթացներում: Առաջարկվում են բակալավորիատի դասընթացներ՝ մետալուրգիայի և նյութագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, բաց հանքարդյունաբերության, տնտեսագիտության և կառավարման ոլորտներում: Ընկերությունը փորձնակներ է ընդունում նաև Հայաստանի այլ բուհերից: Բացի այդ, մենք օգտագործում ենք բոլոր հարթակները՝ բարձրացնելու իրազեկությունը վերոնշյալ ոլորտներում որակյալ կադրերի պակասի մասին:



Ընկերությունը շարունակաբար ներդրումներ է կատարում մասնագիտական վերապատրաստման, կրթության և գենդերային հավասարությունը պահպանելու ուղղությամբ՝ կյանքը բարելավելու և աշխատանքի հնարավորություններն ավելի հասանելի դարձնելու համար:


Ընկերությունն ընկալվում է որպես գրավիչ գործատու, քանի որ կարող է առաջարկել ապահով աշխատանք՝ կայուն աշխատավարձով և մասնագիտական զարգացման իրական հնարավորությամբ:

Կանայք քիչ են ներգրավված հանքարդյունաբերության ոլորտում. միայն 22%-ն են կանայք (**տե՛ս «Աշխատակիցներ» բաժինը**): Սա նշանակում է, որ համայնքների ամբողջ ներուժը չի օգտագործվում, ինչը հանգեցնում է հավասարակշռության խախտման, հատկապես տնտեսական առումով՝ հանքարդյունաբերական համայնքներում:

ԶՊՄԿ-ն պարտավորվում է վերադարձնել հավասարակշռությունը համայնքներ՝ աշխատանքի ընդունելով կանանց՝ ընկերության գործունեության այլ ոլորտներում, օրինակ՝ տեխնիկական բաժնում աշխատակիցների 67%-ը կանայք են: Մենք նաև կշարունակենք ներդրումներ կատարել մասնագիտական վերապատրաստման և կրթության ասպարեզներում՝ կյանքը բարելավելու և վճարովի աշխատանքի հասանելիություն ապահովելու համար:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

3



Մենք հարգում ենք մեր աշխատակիցներին և ներդրումներ ենք կատարում նրանց առաջընթացի համար: ԶՊՄԿ-ն, որպես գործատու, հպարտորեն պահպանում է ձևավորված ավանդույթը. ավելի քան 60 տարի ընկերությունը միակ խոշոր գործատուն է Սյունիքի մարզում և չորրորդը՝ ամբողջ Հայաստանում՝ 2021 թվականի տվյալներով: Այսպիսով, մեր երկարաժամկետ գործատուների ռազմավարությունն ապացուցել է, որ կայուն է ավելի քան կես դար, և մենք մտադիր ենք այն զարգացնել առաջիկա տարիներին:

KEY FACTS & FIGURES: EMPLOYEES

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՆԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՍՏ ՍԵՌԱԿԱՆ ՊԱՏԿԱՆՆԵԼՈՒԹՅԱՆ

65% Կանայք ♀

35% Տղամարդիկ ♂

ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՆԽԱՏԱԿԻՑԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԻՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ

15 ԺԱՄ

4,374

Աշխատակիցների ընդհանուր քանակը

77.2% Տղամարդիկ

22.8% Կանայք

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵ

**29,4 միլիարդ
ՀՀ դրամ
կամ
58,6 միլիոն
ԱՄՆ դոլար**

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԳՈՐԾԱՏՈՒԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Քաջարան համայնքի տնտեսությունն արդեն տասնամյակներ շարունակ պայմանավորված է հանքարդյունաբերությամբ: Ելնելով այս հանգամանքից՝ կարելի է փաստել, որ.

- ▶ տարածաշրջանի տնտեսական զարգացումը միշտ կախված է եղել ԶՊՄԿ-ի տնտեսական աճից,
- ▶ քաղաքները սկզբում գրավել են այն երիտասարդներին, ովքեր պատրաստ էին լքել գյուղը՝ աշխատանք փնտրելու համար:

Ժամանակակից միգրացիան դեպի քաղաքային կյանք ԶՊՄԿ-ի ուսերին է դրել մեծ պատասխանատվություն: Որպես տարածաշրջանի երիտասարդ բնակչության հեռանկարային ապագայի մաս՝ ընկերությունը շարունակում է մեծ ներդրումներ կատարել տեղական համայնքի անդամների կրթության, վերապատրաստման և զարգացման գործում: Այս ներդրումները ծառայում են երկակի նպատակի՝ ապահովելով համայնքին և աշխատակիցներին այն հմտություններով, որոնք անհրաժեշտ են այսօր մրցունակ լինելու համար՝ միաժամանակ ստեղծելով բանիմաց, մասնագիտորեն որակավորված նոր սերնդի բազա:

ԶՊՄԿ-ն մեծ ներդրումներ է կատարում տեղական համայնքի անդամների կրթության, մասնագիտական վերապատրաստման և զարգացման գործում:

Օրինակ՝ երիտասարդներին հնարավորություն է տրվում զարգացնել թվային, տեխնոլոգիական, ինժեներական իրենց հմտությունները և դրանով իսկ հող պատրաստել երկարաժամկետ հաջողության հասնելու համար: Տնտեսական աճի միտումները, աշխատատեղերի ստեղծումը և համայնքներում ներդրումները միասին վերցրած Քաջարանի տնտեսությանը նոր դիմագիծ են հաղորդել: ԶՊՄԿ-ում աշխատում է ավելի քան 4000 մարդ:

Կայունության ձգտող գործատուի ռազմավարությունը նույնպես պետք է հաշվետու լինի: Այդ իսկ պատճառով ԶՊՄԿ-ն պարտավորվում է խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջները՝ որպես աշխատանքային բոլոր հարաբերությունները կարգավորող հիմք՝ ներառյալ ԶՊՄԿ-ի՝ որպես գործատուի իրավունքները, պարտավորությունները և պարտականությունները:

Օրենսգիրքը, մասնավորապես, ներառում է հետևյալ կարևոր դրույթները.

- ▶ Աշխատանքային պայմանագրեր
- ▶ Աշխատաժամեր
- ▶ Վճարովի արձակուրդներ
- ▶ Նվազագույն աշխատանքային տարիք և երիտասարդ աշխատակիցների պաշտպանություն
- ▶ Հավասարություն
- ▶ Արհմիությունների գործունեության կարգավորում
- ▶ Կոլեկտիվ բանակցություններ և կոլեկտիվ պայմանագրեր
- ▶ Աշխատանքային վեճերի լուծում

Աշխատանքային օրենսգիրքը նաև պաշտպանում է մի շարք արտոնություններ ունեցող աշխատողների իրավունքները, այդ թվում՝ կյանքի և հաշմանդամության ապահովագրություն, բժշկական օգնություն, վճարովի մայրության արձակուրդ մինչև 18 ամիս և վճարովի ծնողական արձակուրդ մինչև երկու շաբաթ, բնակարանային և կրթական նպաստներ:

ԶՊՄԿ-ն լրջորեն է վերաբերվում իր պարտավորություններին աշխատակիցների նկատմամբ և մշտապես փնտրում է նոր ուղիներ՝ գործատուի՝ իր պարտավորություններն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Ընդհանուր առմամբ, ընկերության հեռանկարը հուսադրող է. հանքաքարի և օգտակար հանածոների պաշարները գնահատվում են ևս 150 տարի: Այդքանով հանդերձ ԶՊՄԿ-ն գործադրում է բոլոր ջանքերը՝ ապահովելով տեխնիկական ռիսկերից անվտանգության պլաններ, պատրաստելով նաև արտակարգ իրավիճակների պլաններ՝ բնապահպանական միջադեպերի համար (տարածաշրջանային սեյսմիկ ակտիվություն, աղտոտվածություն և համաճարակներ, որոնք կարող են խաթարել հանքի շահագործումը):

ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԶՊՄԿ-ում մարդկանց պաշտպանվածությունը (աշխատողների, այցելուների, կապալառուների, մատակարարների և այլն) ավելին է, քան պարզապես իրավական կամ սոցիալական պարտավորություն: Մենք դա համարում ենք մեր գործունեության անբաժանելի մասը:

Ընկերությունը անվտանգ աշխատանքային միջավայրը համարում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը և պարտավորվում է պաշտպանել իր աշխատակիցներին՝ հետևելով բոլոր համապատասխան օրենքներին, կանոնակարգերին և ձգտելով հասնել «գրոյական մահացության» արդյունքի:

Կենսագործունեության անվտանգությունը ԶՊՄԿ-ի համար առաջնահերթություն է:

Այս նպատակին հասնելու համար ԶՊՄԿ-ն պահանջում է համապարփակ միջոցներ ձեռնարկել, որոնք առաջնային պլան են մղում առողջությունն ու անվտանգությունը: Ընթացակարգեր և անվտանգության հրահանգներ մշակելիս մենք հաշվի ենք առնում աշխատողների հատուկ կարիքները: Մենք նաև տրամադրում ենք ուսուցում աշխատանքի վայրում՝ հիմնված առկա ընթացակարգերի վրա, որպեսզի օգնենք մշտապես պահպանել անվտանգ և առողջ միջավայր: Որոշելով վտանգները՝ մենք կարող ենք ավելի արդյունավետ պլանավորել ռիսկերը նվազագույնի հասցնելու գործընթացները: Հաճախորդները, այցելուները, կապալառուները և բո-

298

2021 թվականին տեղանքում և դրա սահմաններից դուրս իրականացված կենսագործունեության անվտանգության ստուգումների թիվը





26

Տեղում ռիսկերի գնահատումների քանակը

լոր այլ շահագրգիռ կողմերը նույնպես պարտավոր են հետևել մեր կենսագործունեության անվտանգության կանոնակարգերին:

Կենսագործունեության անվտանգության բաժինը ձեռնարկում է բազմաթիվ կոնկրետ քայլեր՝ բացահայտելու և լուծելու անվտանգության հնարավոր խնդիրները, ներառյալ հետևյալ ուղղություններով.

- ▶ անվտանգության ուսուցում նոր աշխատակիցների և այցելուների համար,
- ▶ ամենօրյա ստուգումների և աուդիտների իրականացում,

- ▶ վտանգի նույնականացում և ռիսկի գնահատում (օրինակ՝ ամբարձիչ սարքավորումներ, էլեկտրական ամբարձիչներ, կռունկներ, պայթեցման մեքենաներ, պոչամբարներ, պայթուցիկ նյութերի պահեստներ),
- ▶ սեմինարների կազմակերպում (առաջին բուժօգնության վերաբերյալ գիտելիքների ընդլայնում, բարդ վայրերում կամ բարձրության վրա աշխատելու վտանգների մասին իրազեկվածության բարձրացում):

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 2021թ.

2021 թվականին ԶՊՄԿ-ն վերանայեց իր անհատական պաշտպանիչ միջոցների (ԱՊՄ/PPE) քաղաքականությունը՝ հետագայում ապահովելու համար աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունը ընկերության բոլոր արտադրական և տեղակայման վայրերում: Որպես վերահսկողության հիերարխիայի և ռիսկերի կառավարման մաս՝ ԱՊՄ-ը պաշտպանության վերջին գիծն է և, հետևաբար, միշտ օգտագործվում է ինժեներական, վարչական և ընթացակարգային հսկողության հետ համատեղ:

ԱՊՄ-ի քաղաքականությունը կարգավորում է ընկերության աշխատակիցների համար անձնական պաշտպանիչ սարքավորումների (հատուկ հագուստ, պոդպատե մատներով կոշիկներ, կոշտ գլխարկներ, ակնոցներ, ականջի խցաններ կամ ականջակալներ և այլն) անվճար տրամադրումն ու օգտագործումը: Քաղաքականությունը մշակվել է Աշխատանքի անվտանգության և առողջության վարչության (OSHA) չափանիշների պահանջներին համապատասխան:

ԱՊ և ԱՏ վերապատրաստման հանդիպումների քանակը, 2021թ.



979

ԶՊՄԿ անձնակազմ

188

Անձնակազմի/այլ անձանց ներգրավում

33

Կապալառուներ և ենթակապալառուներ

Քաղաքականությունը նպատակաուղղված է կարգավորելու ԱՊՄ-ի ընտրությունը, ձեռքբերումը և տրամադրումը, ինչպես նաև ոչ պիտանի կամ վնասված ԱՊՄ-ի պատշաճ օգտագործումը, պահպանումը և փոխարինումը:

Կառավարման ողջ անձնակազմը պատասխանատու է այս քաղաքականության իրականացման համար և ապահովում է, որ համապատասխան ընթացակարգերը պահպանվեն իրենց հսկողության տակ գտնվող աշխատակիցների կողմից: Աշխատանքի առողջության և անվտանգության վարչությունը նաև վերահսկում է ԶՊՄԿ-ի աշխատակիցների ընթացակարգերի ճիշտ իրականացումը, ներկայացումը և գործնական ուսուցումը երկու տարին մեկ անգամ:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կապալառուները ԶՊՄԿ-ի գործունեության հիմնասյուներից են: Նրանց անվտանգության ապահովումը նույնքան կարևոր է, որքան ընկերության աշխատակիցներինը: Աշխատանքի առողջության և անվտանգության բաժինը սահմանել է հատուկ պահանջներ հավաքագրման, ներգրավման, մոնիտորինգի համար և ԶՊՄԿ-ի անունից աշխատող բոլոր կապալառուների կատարողականի մասին հաշվետվության մեխանիզմ:

Նախ, յուրաքանչյուր կապալառու պարտավոր է կատարել միայն այն խնդիրները, որոնք սահմանված են պայմանագրով: Դրանք նաև պետք է համապատասխանեն ԶՊՄԿ-ի կողմից տրամադրված բոլոր HSE ուղեցույցներին: Բացի այդ, նրանք պետք է ապահովեն, որ իրենց աշխատակիցները և ենթակապալառուներն ունենան համապատասխան որակավորում, վերապատրաստում,

փորձ և գիտելիքներ, որոնք պարտադիր են աշխատանքը կատարելու համար:

Կապալառուները պետք է ապահովեն, որ բոլոր աշխատանքները կատարվեն պատշաճ հսկողության ներքո: Թյուրիմացություններից խուսափելու համար յուրաքանչյուր կապալառու նշանակում է HSE-ի աշխատակից և կապ է հաստատում ԶՊՄԿ-ի հետ: Նրա պարտականությունն է գործառնական ընթացակարգերի խիստ պատշաճ պահպանումը բոլոր այն առաջադրանքների համար, որոնք ճանաչվել են «բարձր ռիսկային»:

Վերջապես, ԶՊՄԿ-ի աշխատավայրի անվտանգության և առողջության պահպանման, ինչպես նաև ցանկացած հարցի բարձրաձայնման պատասխանատվությունը, որը կարող է դառնալ ԶՊՄԿ-ի առողջության և անվտանգության խնդիր, կրում են կապալառուները:

ԶՊՄԿ-ի խիստ ուշադրությունը կանոնակարգերի և ընթացակարգերի պահպանման վրա ապահովում է անվտանգ միջավայրի ձևավորմանը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, 2021Թ.

Պատահար	Ընդամենը
Ընդհանուր պատահարներ	272
Ընդհանուր աշխատած մարդ/ժամ աշխատածամասակ	7,768,224
Գույքային վնաս (ավտոմեքենաներ և բեռնատարներ)	14
Առաջին օգնության դեպքեր	251
Ճանապարհատրանսպորտային պատահարներ	2
Բնապահպանական միջադեպեր	2
Աշխատանքային օրվա կորստի դեպքեր	3

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԶՊՄԿ-ն մեծ ուշադրություն է դարձնում իր աշխատակիցների վերապատրաստմանն ու զարգացմանը, որպեսզի նրանք կարողանան իրենց աշխատանքը կատարել առավելագույն արդյունավետությամբ: Վերապատրաստման բացթողումները վերացնելու և համարժեք աջակցություն տրամադրելու համար ընկերությունը կանոնավոր կերպով իրականացնում է վերապատրաստման կարիքների վերլուծություն (TNA), ինչը հնարավորություն է տալիս առավել թիրախավորված կազմել հաջորդ ուսումնական պլանները, օգնում է ընկերությանը հասկանալ՝ ճի ուղղությամբ և ինչպե՞ս հասնել իր աշխատակիցների մասնագիտական զգալի աճին:

2021 թվականի Ուսուցման և զարգացման ծրագիրը կենտրոնացած էր ընդհանուր և տեխնիկական ուսուցման վրա:

Մեկ աշխատակցի համար վերապատրաստման միջին ժամանակը 2021թ.



ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ		ԿԱՐԳԱՎԻՃԱԿ, 2021թ.		
		Գործառնական ընթացակարգի մշակում	Ընթացակարգի վերանայում և թարմացում	Հաղորդակցություն և անձնակազմի վերապատրաստում
1.	Ներածական ուսուցում՝ Նոր աշխատողների համար	Completed	Completed	In progress
2.	Անվտանգ աշխատանքային ընթացակարգերի ուսուցում	Completed	Completed	In progress
3.	Առաջին բուժօգնության ուսուցում	Completed	In progress	In progress
4.	Հավաստագրում աշխատավայրում	Completed	Completed	Completed
5.	Կրակմարիչի կիրառման ուսուցում	Completed	Completed	Completed
6.	Վտանգի նույնականացում	Completed	Completed	In progress
7.	ԱՊՄ ուսուցում	Completed	Completed	In progress

Completed In progress Not started



ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2013 թվականին Հայաստանը վավերացրել է «Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հնարավորությունների երաշխիքների մասին» օրենքը, որը կարգավորում է գենդերային հավասարությունը և պաշտպանում է կանանց և տղամարդկանց գենդերային խտրականությունից:

ԶՊՄԿ-ն այս խնդրով լրջագույնս է զբաղվում: Ընկերությունը գիտակցում է, որ հավասար հնարավորությունները՝ անկախ սեռական պատկանելությունից, կարևոր են ընկերության, հասարակության և երկրի համար: Այդ իսկ պատճառով ԶՊՄԿ-ն պատրաստ է նպաստել կանանց մասնակցության բարձրացմանը և վարում է խտրականության բացառման ընդհանուր քաղաքականություն, այդ թվում՝ գենդերային խտրականության:

2021 թվականին ընդհանուր հաշվառմամբ ԶՊՄԿ-ում աշխատակիցներից 997-ը կանայք են՝ կազմելով ընդհանուր աշխատողների 22,8%-ը:

ԶՊՄԿ-ի՝ 2021 թվականին բազմազանությունը և հավասարությունը խթանելու նախաձեռնությունները հանգեցրել են կանանց հանդեպ խտրականության զրոյական դեպքերի:



ԶՊՄԿ-Ի՝ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԶԱՆՔԵՐԸ

Արդեն երրորդ տարին է, ինչ աշխարհը գտնվում է COVID-19-ի՝ SARS-CoV-2 նոր կորոնավիրուսի ճիրաններում: Ի սկզբանե ԶՊՄԿ-ն ձեռնարկել է հակահամաճարակային մի շարք միջոցառումներ՝ իր աշխատակիցներին վիրուսի տարածումից պաշտպանելու համար:

Ախտահանումն իրականացվում է վերահսկվում է Աշխատանքի պաշտպանության և անվտանգության վարչության կողմից օրական երկու անգամ: Ամենաշատ օգտագործվող մակերեսների վրա ախտահանիչ միջոցներ են ցողում երկու ժամը մեկ, իսկ փակ տարածքները մշակվում են մանրէասպան լամպերով:

Այլ պարտադիր միջոցառումները ներառում են աշխատանքային ժամերին դիմակ կրելը, անձնական հանդիպումների չափն ու հաճախականությունը նվազեցնելը, աշխատողների ջերմությունը օրական երկու անգամ չափելն ու գրանցելը, հնարավորության դեպքում մարդկանց և աշխատատեղերի միջև 1,5 մետր հեռավորության պահպանումը և բոլոր տարածքների օդափոխումը՝ յուրաքանչյուր երկու ժամը մեկ:

COVID-19-ի տարածումը կանխելու բոլոր միջոցառումներն իրականացվում են Առողջապահության և անվտանգության վարչության անմիջական հսկողության ներքո:

COVID-19-ը՝ թվերով (2020-2021թթ.)

ԶՊՄԿ-ում գրանցվել են COVID-19-ի դեպքեր՝ **218**

ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչության ստուգայցեր՝

3

Ախտահանման ընթացակարգերի հաճախականություն/օր՝

2x

Արդյունքը՝

COVID-19-ից

0

մահացու դեպքեր 2020-2021թթ.



ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչությունը 2020 թվականից մինչև 2021 թվականն ընկած ժամանակահատվածում իրականացրել է երեք ստուգում: Ստուգումների ընթացքում պարզվել է, որ ԶՊՄԿ-ն հակահամաճարակային բոլոր աշխատանքներն իրականացնում է ամենաբարձր մակարդակով: Տեսչական մարմինը շնորհակալություն է հայտնել ընկերությանը այս կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության համար:



Սկանավորե՛ք QR կոդը տեսանյութ դիտելու համար. մանրամասն ներկայացված են ընկերության ջանքերը COVID-19-ի տարածման դեմ պայքարում:


- ▶ Աշխատողներին տրամադրվող ԱՊՄ՝ մեկանգամյա օգտագործման պաշտպանիչ հագուստ, կոմբինեզոն, ակնոցներ և/կամ դեմքի վահաններ, դիմակներ, ձեռնոցներ, փակ կոշիկեղեն կամ բախիլներ:
- ▶ Աշխատակիցների ջերմաստիճանը չափվել է օրական երկու անգամ՝ աշխատանքի սկզբում և ավարտին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ, 2021Թ.

4,374
աշխատակից

Սա 34%-ով քիչ է, քան 2020թ. ցուցանիշը: Այս անկումը պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝ աշխատանքը թողնելու, թոշակի անցնելու (շուրջ 180 աշխատակից), ինչպես նաև անցյալ հունիսից աշխատանքի ընդունման սառեցմամբ:

Ընկերության աշխատուժի գերակշիռ մասը Սյունիքի մարզից է, իսկ մնացած մասը՝ Հայաստանի այլ բնակավայրերից.



- ▷ 72% Քաջարանից (♂) և հարակից գյուղերից
- ▷ 25% Կապանից (♀)
- ▷ 3% ՀՀ այլ վայրերից

135 նոր աշխատող

Կադրային ամենամեծ աճը նկատվել է անվտանգության, տրանսպորտի և վարչարարության ոլորտում:



257 աշխատակից թողել է աշխատանքը ԶՊՄԿ-ում


2.8% Աշխատակազմի շրջանառության դրույքաչափի (401-1)

3,377
(77.2%)
տղամարդ
աշխատակից

997
(22.8%)
կին
աշխատակից

Բոլոր աշխատակիցներն աշխատել են ստորև նշված երեք տարածքներից մեկում.

- | | | |
|---|--|--|
| 1 Արտադրություն
2,843
աշխատակից
(65%) | 2 Տեխնիկական
524
աշխատակից
(12%) | 3 Վարչական
1,007
աշխատակից
(23%) |
|---|--|--|



97.1%
լրիվ դրույքով աշխատողների տոկոսը


Մնացածը կազմված է կապալառուների անձնակազմից



29,4 մլրդ դրամ կամ 58,6 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր կադրային բյուջե


Նախորդ տարվա համեմատ աճել է 5%-ով

Բյուջե տոկոս ըստ բաժինների



ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ՝ տոկոսով*

Աշխատակիցների վարձատրությունը բաղկացած է բազային աշխատավարձից, ֆիքսված բոնուսից, բարդության բոնուսից և գիշերային հերթափոխի բոնուսից:




* 100% դեյտան վերաբերում է արձակուրդին և հիվանդության կապակցությամբ արձակուրդին

ԶՊՄԿ-ի բոլոր աշխատակիցները արհմիության անդամ են, որը պաշտպանում է աշխատողների իրավունքները և նրանց աշխատանքային պայմանները, ինչպես նաև տրամադրում է լրացուցիչ արտոնություններ: Դրանց թվում է միանվագ վճարը, որը աշխատակիցները ստանում են հատուկ իրադարձությունների, այդ թվում՝ ամուսնության, երեխայի ծննդյան, զինվորական ծառայության կամ ընտանիքում մահվան կապակցությամբ: 2021 թվականին աշխատակիցներին լրացուցիչ նպաստներ չեն վճարվել:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ



Մենք համարում ենք, որ շրջակա միջավայրը մեր հիմնական արժեքն է: Իր գոյության 70 տարիների ընթացքում ԶՊՄԿ-ն պարտավորվել է վերահսկել և նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա իր ազդեցությունը: Մենք այժմ քայլեր ենք ձեռնարկում մեծացնելու այս հանձնառությունը, որպեսզի ապահովենք ավելի կայուն ապագա բոլորի համար:



ԲՆԱՊԱՅՊԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանքարդյունաբերական գործունեությունը սովորաբար էական ազդեցություն է ունենում շրջակա միջավայրի վրա. եթե պատշաճ միջոցներ չձեռնարկվեն բնական միջավայրը պաշտպանելու համար, կարող են առաջանալ երկարաժամկետ խնդիրներ, որոնք հիմնականում ազդում են շրջակայքում ապրող համայնքների և շահագրգիռ կողմերի վրա: Նման անթույլատրելի կառավարումը կարող է նույնիսկ վտանգել մեր գործունեության լիցենզիան:

Հետևողական հաշվետվությունը բնապահպանական հարցերում պաշտպանության ամենակարևոր գիծն է: Այդ իսկ պատճառով ցանկացած էական բնապահպանական միջադեպ, որում ներգրավված է ԺՄԿ-ն, փաստաթղթավորվում և ներկայացվում է հետագա գնահատման: Թափանցիկ հաշվետվությունների և նման միջադեպերի հիման վրա ստացած գործնական գիտելիքների փոխանակման միջոցով ընկերությունը ավելի լավ է պատկերացնում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և, որ ավելի կարևոր է, նվազեցնելու ուղիները: Բնապահպանական ռիսկերի այս նվազեցումը մենք համարում ենք մեր գործունեության «սոցիալական լիցենզիայի» պահպանման հիմքը:

Ընկերությունը մշակել է բնապահպանական կառավարման համակարգ (ԲԿՀ/EMS) ԶՊՄԿ-ի ամբողջական գործունեության համար՝ համաձայն ISO14001-ի: ԲԿՀ-ն բխում է շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի հիմնական պլաններից՝ ներառելով նաև առողջության և անվտանգության կառավարման պլանները:

ՋՈՒՐ

Հայաստանի աշխարհագրական դիրքը Սև և Կասպից ծովերի միջև երկիրը հարստացրել է ջրային ռեսուրսներով: Համեմատության համար Նշենք, որ մեկ շնչի հաշվով տարեկան օգտագործվում է ավելի քան 3100 մ³ ջուր, ինչը երկու անգամ գերազանցում է համաշխարհային միջինը՝ 1700 մ³: Ժամանակի ընթացքում բնակիչները ջրամբարներ և ոռոգման ջրանցքներ են կառուցել՝ ջուրն առավելագույնս արդյունավետ օգտագործելու համար: Պրակտիկա, որը պահպանվել է մինչ օրս:

Սակայն ոչ բոլոր շինություններն են լավ պահպանված: Վատ ու հին ջրային ենթակառուցվածքները, վնասված ջրամբարները, կոտրված խողովակաշարերն ու ոռոգման ցանցի անսարքությունները հանգեցնում են նրան, որ տարեկան միջին հաշվով կորչում է Հայաստանի ջրային ռեսուրսների մոտ 70%-ը: Արդյունքում, Հայաստանի միջին տարեկան ջրային ռեսուրսները մեկ շնչի հաշվով կազմում են 465 մ³, ինչն ավելի ցածր է, քան նվազ ջրային ռեսուրսներ ունեցող հարևան երկրներում՝ Վրաստանում և Ադրբեջանում: Մասնավորապես, Սյունիքի մարզը, հատկապես Արծվանիկն ու Կապանը, ջրամատակարարման խնդիր ունեն. գործող խողովակաշարերը մաշվել են տասնամյակներ շարունակ ոչ պատշաճ սպասարկման պատճառով՝ թողնելով համայնքներին խմելու և ոռոգման ջրի սակավության պայմաններում: Յոթ բնակավայրերից միայն Սևաքարում և Քաջարան քաղաքում է ջրի որակը գնահատվում «բավարար», իսկ մյուս տարածքներում, օրինակ՝ Կապանում, ջրամատակարարման ընդհատումները հասնում են շաբաթական 10 ժամի:


Խմելու և ոռոգման ջրի հետ կապված խնդիրները համայնքների զարգացման ծրագրերում առաջնահերթություն են, սակայն տուժած համայնքների ջրային ենթակառուցվածքների միայն մի մասն է հնարավոր վերականգնել:

Ջրային ռեսուրսներ

Հայաստանի աշխարհագրական դիրքը Սև և Կասպից ծովերի միջև հարստացրել է երկիրը ջրային ռեսուրսներով

Հայաստան՝ մեկ շնչի հաշվով տարեկան 3100 մ³

Աշխարհում միջինը՝ 1700 մ³ տարեկան մեկ շնչի հաշվով




ՋՊՄԿ-Ի ՋՐԱՍՊԱՌՈՒՄԸ


Ջուրն առաջնային անհրաժեշտություն է հանքարդյունաբերության կազմակերպման համար: ՋՊՄԿ-ն ամեն ինչ անում է, որպեսզի կենսական ռեսուրսը ճշգրիտ մոնիտորինգի ենթարկվի և խելամոռրեն կառավարվի: Ընկերությունը մանրագնին վերահսկում է հանքի շահագործման ողջ ընթացքում ջրի որակի վրա ցանկացած հնարավոր ազդեցություն՝ ներառյալ օգտագործվող ջրի քանակը՝ երկարաժամկետ հեռանկարում ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը ապահովելու համար:

ՋՊՄԿ-ն ջուր է վերցնում չորս ջրառներից և տարեկան սպառում է 69,970,590 մ³ ջուր:

- ▶ 68,842,111 մ³ քաղցրահամ ջուր գալիս է մոտակա գետերից,
- ▶ 117,589 մ³ խմելու ջուր ապահովում է Քաջարան քաղաքի ջրամատակարարման համակարգը:



Ջրի ընդհանուր սպառումը մեկ աշխատանքային տարածքի համար՝ %



- Մշակում
 - Ծանրակ օգտագործում (արտադրամասեր, քիմիական լաբորատորիա)
 - Այլ
- Հորատում հանքաքարի արդյունահանման համար՝ 0.04%
 Բեռնատարների լվացում՝ 0.03%
 Սարքավորումների լվացում՝ 0.01%
 Փոշու զսպում՝ 0,16%
 Կենցաղային սպառում (խմելու, ճաշարան, լվացքատուն, սանմաքրում)՝ 0.06%

ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՋՐԱՍՊԱՌՈՒՄ ԶՐԱՍՊԱՌՈՒՄԸ ՀԱՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՑԻՎԼԻ ԺԱՄԱՆԱԿ

Համայնքներ	%	մ ³
Հորատում հանքաքարի արդյունահանման համար	0.04	29,409
Բեռնատարների լվացում	0.03	24,290
Լվացքի սարքավորումներ	0.01	5,320
Փոշու զսպում	0.16	113,934
Վերամշակում	98.45	68,886,881
Ծանրակ օգտագործում (արտադրամասեր, քիմիական լաբորատորիա)	1.24	865,348
Կենցաղային սպառում (խմելու, ճաշարան, լվացքատուն, սանիտարական մաքրում)	0.07	45,408
Ընդամենը	100	69,970,590

ՋՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՊԼԱՆԸ

ԶՊՄԿ-ն առանձնացրել է ջրի որակի վրա բացասական ազդեցությունների հինգ կատեգորիա, որոնք չեզոքացնելու համար մշակել է գործողությունների պլաններ և մեղմացման միջոցառումները:

1 **Ազդեցությունը կենսաբազմազանության վրա**
Կենսաբազմազանության և ջրի որակի վրա ազդեցությունը փոխհատուցելու համար տեղադրվել է ջրի վերամշակման համակարգ՝ օբյեկտի ներսում ջրի հոսքերը վերաօգտագործելու համար: Կեղտաջրերի ծավալն ու բաղադրությունը գնահատելու և հետագա մեղմացման միջոցառումների անհրաժեշտությունը և դրանց ծավալը որոշելու համար մշակվել են արտակարգ իրավիճակների պլաններ:

2 **Չանքավայրից նստվածքային աղտոտվածություն**
Աղտոտող նյութեր և նստվածքներ պարունակող ջրային հոսքերը թափվում են հանքի ջրի ավազավազան: Մեղմացնող միջոցառումները ներառում են աղտոտված նստվածքների կանոնավոր հեռացում և դրանց հեռացում հարմար տեղամասում, ինչպես նաև պոմպերի և դրենաժային համակարգի մեկուսացման համապատասխան միջոցների ապահովում՝ հանքում աղտոտիչների մեծ արտահոսքի դեպքում:

3 **Ազդեցությունը մշակման գործողություններից**
Վերամշակող գործարաններում իրականացվել են նաև վերահսկողության և մեղմացման տարբեր միջոցառումներ: ԶՊՄԿ-ն պարտավորվել է նվազագույնի հասցնել գետերից ջրառը՝ հավաքելով վերահարձ ջուրը այլ աղբյուրներից, ինչպիսիք են տեղում մակերևութային արտահոսքերը: Ազդեցության ենթարկված գետերում ջրի մակարդակը կվերահսկվի, իսկ պոմպային աշխատանքները կկարգավորվեն ցածր հոսքի ժամանակաշրջաններում: Գետերում ելակետային հոսքի և ջրի մակարդակի որոշումը կօգնի նվազեցնել բացասական ազդեցությունները:

4 **Քիմիական նյութերի արտահոսք**
Քիմիական արտահոսքերը ակնհայտ և մշտական վտանգ են ներկայացնում ջրային աղբյուրների համար: Արտահոսքերը զսպելու համար կկառուցվեն պահեստարաններ՝ հարակից կայացնելով: Մակերևութային ջրերի արտահոսքը այս ամբարած տարածքներից կանցնի համապատասխան տարանջատիչով կամ այլ մաքրման միջով: Մակերևութային արտահոսք տեղի կունենա նաև անմիջապես արտադրական գոտու, վերամշակող գործարանի և հումքի գոտու տարածքում: Մշակվում են արտակարգ իրավիճակների պլաններ խոշոր արտահոսքերը զսպելու համար:

5 **Աղտոտվածություն այլ աղբյուրներից**
Ինչ վերաբերում է այլ աղբյուրներից աղտոտվածությանը, ապա արդյունահանված հանքաքարի պահեստավորումը կարող է հանգեցնել ջրահոսքերի և շրջակա հողերի աղտոտմանը: Արտադրանքը կպահվի ներսում՝ տեղումների և մակերևութային ջրերի արտահոսքից խուսափելու համար: Կապահովվեն նաև կեղտաջրերի հեռացման համակարգեր, ինչպես նաև մակերևութային ջրերի հեռացման համար համապատասխան միջոցներ:

Մշտապես մշակվում են հսկողության և մեղմացման միջոցառումներ՝ ջրի որակի վրա բացասական ազդեցությունների բոլոր հինգ կատեգորիաները լուծելու համար:

ՋՐԻ ՄԱՔՐՈՒՄ

Տարեկան վերամշակված ջրի քանակը վերամշակող գործարանի համար օրական 2,409,000 մ³ է: ԶՊՄԿ-ն ուսումնասիրում է արտադրության գործընթացում վերամշակված ջրի քանակի և ջրի վերաշրջանառության ավելացման մի քանի տարբերակներ: Մենք սա համարում ենք անհրաժեշտ քայլ՝ ավելի կայուն հանքարդյունաբերություն ունենալու և շրջակա միջավայրի պահպանությունն ապահովելու համար:

Ընկերությունն արդեն սկսել է իրականացնել առաջին միջոցառումները: Օրինակ, բեռնատարների և սարքավորումների լվացման կեղտաջրերն անցնում են ջրի բաժանարարի միջով և ուղղվում լճակ՝ նստեցման: Այնուհետև մաքրված ջուրը վերամշակվում և օգտագործվում է հանքարդյունաբերության մեջ՝ փոշին զսպելու համար:

